№ 65 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 25

1906

ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 25 № 65

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օր'երը)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։ Մարտի 1-ից մինչև 1 յունիսի 2 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Աննա Ջոհրաբեան, և Սարգիս Գաբրիէլեան Գասպարեանները ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին, առաջինը՝ տաքեր և երկրորդի եղբօր որդու Բագուի Ալէքսանդր III-րդ արական գիմնազիայի վեցերորդ դասատան աշակերտի՝

ԳԱՍՊԱՐ ԱՒԵՏԻՍԵԱՆ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ

վաղաժամ մահվան մասին։ Հոգեհանգիստը կատարվելու է այսօր, շաբաթ, մարտի 25-ին, երեկոյեան 6½ ժամին։ Յուղարկաւորութիւնը (Օլգինսկայա փողոց № 23, տուն Բաշինջաղեանի) լինելու է կիրակի, մարտի 26-ին, առաւօտեան ժամը 10-ին, դէպի ս. Նշան եկեղեցի։ Թաղումը Խոջիվանքի գերեզմանատանը։ 1—2

Դարիայ Եգորօվնա Ստեփանեանը իր որդկերանցով ցաւօք սրտի յայտնում է իր ազգականներին ու բարեկամներին յանկարծակի մահը իր անմոռանալի ամուսին

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ

Հոգեհանգիստը լինելու է շաբաթ երեկոյեան ամսիս 25-ին ժամը ճիշտ 7-ին, իսկ յուղարկաւորութիւնը կիրակի առաւօտեան ժամը 10-ին սեփական տանից Միքայէլեան փողոց № 41 Կուկիայ Նորաշէն սուրբ Աստուածածին եկեղեցին, այն տեղից դէպի Խոջիվանքի գերեզմանատունը։ 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարուոքումների հոգսը. Վերջին տեղեկութիւններ. Դէպքերը Վրաստանում. Մտքեր և փաստեր. Տեղեկութիւններ գաւառից. Պերճախօս թուեր. Տխրահռչակ ժողովներ. Դատաստանական ղաւլիճից. Ուսումնարանական համագումարի առիթով. Ինչ են անում Շուշեցիները. Ռուսաստանի սահմանադրութեան ճակատագիրը. Նամակ Ղարասուբազարից Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԲԱՐԻՈՔՈՒՄՆԵՐԻ ՀՈԳՍԸ

I

Մեր գիւղերում ներկայումս տեղի ունեն գիւղացիների մէջ մեծ վիճաբանութիւններ մի հարցի առիթով։ Վիճաբանութիւնները տեւում են ժամեր, օրեր և շաբաթներ և զանազան տեղերում զանազան որոշումներ են տացել։

Ի՞նչ հարց է դա։

Դա գիւղում մնալու և պանդխտութեան դիմելու հարցն է։

—Պէտք է բոլոր տղամարդ ոյժերը մնան գիւղում և պաշտպանեն գիւղը, խօսք չէ կարելի գիւղը թողնել անպաշտպան, կանանց ու երեխաների վրա։

Այդպէս ասում են գիւղացիները այն տեղերում, ուր հայ գիւղերը ենթարկվել են յարձակումների անցեալում և մանաւանդ նրանք, որոնք շրջապատված են Թուրք գիւղերով։

—Պէտք է գնալ քաղաքներ և պանդխտութեամբ հաց ճարել ու գլուխ պահել։

Այդպէս ասում են այն գիւղացիները, որոնք կամ արդէն սովոր են պանդխտութեան, կամ անկարող են ապահովել իրանց՝ գիւղական զբաղմունքներով։

II

Առանց երկբայութեան կարող ենք ասել, որ եթէ Նախիջևանի գաւառի հայ գիւղերի տղամարդիկ մնան իրանց գիւղերում և փոքր ի շատէ համբերաշխ ու գիտակցօրէն վարեն իրանց գործերը, նրանք կարող կը լինեն ազատել իրանց գիւղերը այնպիսի սարսափներից, որոնց նրանք ենթարկվեցին անցեալ տարի։

Այժմ, երբ հայ գիւղերում արդէն մեծ թւով երևացել են տղամարդիկ, ամենքը սկսել են զգալ վստահութիւն և ապահովութիւն առաջիկայի համար։

Չը նայելով, որ հայերը կազմում են գաւառի ազգաբնակութեան փոքր մասը, այնուամենայնիւ նրանք վստահ են իրանց վրա, որովհետև կարող են միահամուռ ոյժերով դիմադրել և մաքառել յարձակվողների դէմ։ Որքան որ շատ լինեն յարձակվող Թուրքերը, բայց երբ նրանք գիտեն, որ կարող են հանդիպել դիմադրութեան և կորուստներ ունենալ, անկասկած, նրանք զգոյշ կը լինեն և կը խուսափեն ընդհարումներից։

III

Տղամարդկանց աւելանալը գիւղում առիթ է տալիս հարց դնելու այն բանի մասին, թէ արդեօք բոլորը գործ կը գտնեն գիւղում։

Կան գիւղեր, որտեղ գործ կը գտնվի բոլորի համար. բայց կան և այնպիսիներ, որտեղ հողը փոքր է և բանւոր ոյժերի մի մասը ստիպված է պարապ մնալ։

Անկասկած, եթէ մեր գիւղացիները մտցնէին կատարելագործութիւններ գիւղատնտեսութեան մէջ, նրանք աշխատանքի նոր աղբիւրներ կը ստեղծէին։ Անշուշտ, եթէ մենք նոր արհեստներ ներմուծէինք մեր գիւղերում, մենք տուած կը լինէինք գիւղացիների ձեռքը աշխատանքի նոր միջոցներ։ Բայց մինչև այժմ շատ քիչ գործ է կատարված այդ ասպարէզում։

Այդպիսով մեր ամենախոշոր հերթական հարցերից մէկն է դառնում երկրագործութեան և առհասարակ արհեստների զարգացումը մեր գիւղերում, մի հարց, որով պէտք է լուրջ կերպով զբաղվի մեր սերունդը։

IV

Այստեղ մենք չենք շօշափում պանդխտութեան ընդհանուր հարցը։ Այլ աչքի առաջ ունենք միայն այն՝ թէ որքան գիւղը ինքը կարող է աշխատաւոր ոյժեր ընդունել և պահպանել իր մէջ։

Եւ հասկանալի է թէ ինչու։

Պանդխտութիւնը չէ կարող վերանալ և նա կը մնայ իբրև մեր նոր տնտեսական կեանքի երևոյթներից մէկը։ Որքան էլ գիւղատնտեսութիւնը առաջադիմութիւն անէ, դարձեալ կը մնան շրջաններ, որտեղ նա անկարող կը լինի կլանել բոլոր ոյժերը և նրանց մի մասը պահանջ կը զգայ աշխատել գործարաններում և քաղաքներում։

Աշխատանքի այդ ճիւղերը ունեն իրանց տնտեսական նշանակութիւնը և նրանք էլ պէտք է զարգանան ապագայում, հարթելով ճանապարհ տեխնիքական արդիւնագործական ասպարէզում։

Այդպիսով պանդխտութիւնը չէ կարող անհետանալ և ոչնչանալ մեր երկրում։ Նա կը մնայ, իբրև մի երևոյթ, որ բղխում է իրերի տրամաբանութիւնից։ Եւ եթէ այսօր պանդխտացող հայերը նոյն իսկ անգործ մնալով, աշխատում են գիւղերից չը հեռանալ, դա արվում է գիւղի պաշտպանութեան համար։

V

Թէ այն հանգամանքը, որ մեր գիւղը կարող է աւելի մեծ թւով մարդիկ զբաղեցնել, եթէ նա մտցնի կատարելագործութիւններ երկրագործութեան մէջ և թէ այն հանգամանքը, որ գիւղի պաշտպանութիւնը պահանջում է տղամարդկանց որոշ թուի մշտական ներկայութիւն, առաջ են մղում գիւղի և գիւղական կեանքի բարելաւութեան մի շարք խնդիրներ։

Երիտասարդ ոյժերի գիւղերում խմբվելը կը ծնի մի շարք նոր ձեռնարկութիւններ, որոնք կը դարձնեն մեր գիւղական շրջանները ոչ միայն ընդունակ աշխատանքի նոր աղբիւրներ գտնելու, այլ և հաճելի դարձնելու գիւղական կեանքը տեղական գործողների համար։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կըրզան գիւղի բնակիչները մինչև այժմ Թիֆլիսումն են։ Նրանք յետաձգեցին իրանց գնալը երկու պատճառով՝ մէկ, որ նրանց երեխաների մէջ կան կարմրուկով հիւանդներ, և երկրորդ՝ նրանց մեծ մասը ուզում է գնալ ուղիղ խոտահարքին, երբ անմիջապէս կը սկսվեն պարապմունքները։

Կըրզանցիներին Ղազախի գաւառը տանելու համար Թիֆլիս է եկել նրանց հովվող քահանան։ Առաջին խումբը կը ճանապարհվի այդ քահանայի հետ այս օրերս։

—

Ղազախի գաւառի Կարմիր-Աղբիւր գիւղի Համբարձում քահանայ Պօղոսեանը, մտնելով «Մշակի» խմբագրատուն, պատմեց մեզ հետեւեալը։

Ես եկել եմ Կարմիր-Աղբիւրից մեր նախկին ճանապարհով, այսինքն Թօուզ կայարանով։

Սա առաջին դէպքն էր, որ մեր գիւղացիները վստահացան այդ ճանապարհով երթեւեկել։ Հայ-Թուրքական խլրտումներից յետոյ, այդ ճանապարհը մեզ համար փակվել էր և մենք հաղորդակցութիւն պահպանում էինք Թիֆլիսի հետ լեռներով, այսինքն Նուր, Աղդան, Քարվանսարա գիւղերով։

Մենք ճանապարհվեցինք մեր գիւղից 15 հոգով։ Մեր ճանապարհը անցաւ խաղաղ, բայց դեռ ապահով չենք առաջիկայի համար։ Կօզակների երկու պահակները վերցված են այժմ։ Այդ պահակներից մէկը Մովսէս գիւղումն էր, միւսն էլ Թօուզ կայարանի մօտ Օքսիւզլու կոչված Թուրք գիւղում։

Հայ գիւղացիները սկսել են իրանց դաշտային աշխատանքները, բայց մի քանի կէտերում, ուր հայկական հողերը մօտենում են Թուրքական հողերին, հայերը չեն վստահում ազատ դուրս գալ աշխատանքի։ Այսպէս, օրինակ, Նորաշէն գիւղի հայերը չեն այցելում իրանց այն այգիները, որոնք գտնվում են Ալիբեգլու Թուրք գիւղի հողերին կից։

Կըրզան գիւղի ցանքերը բաւական աչքոյ բուսել, զարգացել են. բայց Կըրզան գիւղը աւեր ու դատարկ է։ Կըրզանցի հայերի մի երկու տասնեակ հոգի պատսպարվել են Թուրք Մանսուրլու գիւղում և այդտեղից գնում են խնամելու իրանց արտերը, ջրելու և հսկելու։

Կըրզան գիւղում մնացել է անվնաս միայն մի տուն։ Նրա մէջ բնակվել է մի Թուրք, որը և պահել է տունը իր համար։ Դա յայտնի աւազակ Թանդրիվերդիի որդին է, որ ներկայումս գտնվում է այդ տան մէջ։

Կըրզանում Թուրքերը աւերել են ոչ միայն տները, այլ և հայ եկեղեցին, որը հիմնայատակ է արված։ Եկեղեցու աւերումը կատարվել է յայտնի Թուրք վաճառական Հաջի-Ամիրխանի նախաձեռնութեամբ և ղեկավարութեամբ։ Այդ վաճառականը, որ գտնվում էր Աղստաֆայում և յայտնի էր, իբրև լուրջ ու ազդեցիկ մի անձնաւորութիւն, գլուխ է կանգնել այդ չարագործութեան։ Եկեղեցին աւերելուց յետոյ, վերցրել է նրա անօթեղէնը, գրքերը և զանգակները։ Հաջի-Ամիրխանը ներկայումս բանտարկված է։

Կըրզանցիների դրութիւնը դեռ որոշված չէ։ Գիւղացիները անկարող են վերադառնալ իրանց գիւղը, բայց նոր գիւղատեղ էլ դեռ չեն գտել։ Երևի ամառվայ ընթացքում նրանք կը մնան Շամշադինի հայ գիւղերում մինչև աշուն։

Մենք առիթ ունեցանք տեսնվելու և խօսելու շատ Թուրքերի հետ։ Այն Թուրքերը, որոնք միշտ ապրել են հալալ աշխատանքով, զբաղվել են երկրագործութեամբ, արհեստով կամ վաճառականութեամբ, շատ ցաւում են եղածի համար և անկեղծ ցանկանում են հաշտ ու խաղաղ ապրել հայերի հետ։

Բայց կայ անհանգիստ տարրերի մի մեծ թիւ, որ բոլորովին ուրիշ տրամադրութիւններ ունի։ Թուրքական այդ անհանգիստ տարրերը ամենևին չեն համարում ընդհարումները վերջացած և շատ խէթ աչքով են նայում հայերին։

Խղճմտաւոր և բանիմաց Թուրքերը շատ դժգոհ են իրանց այդ անհանգիստ, անգործ տարրերից և իրանք էլ շատ կը ցանկանային տեսնել նրանց զսպված ու սաստված։

Իսկ այդպիսի բացասական տարրերի քանակութիւնը փոքր չէ։ Այդ տարրերից են մշտապէս կազմվել հրոսակախմբերը, որոնցով առատ է եղել Ղազախը։

Այդ տարրերը ատում, հալալ աշխատանք չեն սիրում և միշտ հակված են ծուռ ու մուռ ճանապարհներով պահել իրանց գլուխը։

Թէև հանգստութիւնը վերականգնել է, բայց մինչև այժմ դեռ անյայտ է շատ մարդկանց ո՞ւր լինելը։ Օրինակ կարմիրաղբիւրեցի Բէհբուդ Բաբայեան անունով մի երիտասարդ, որ ընդհարումներից առաջ ծառայում էր Ջագեամ կայարանում, հաշտարար դատաւորի մօտ, մինչև այժմ երևան չէ եկել։ Պէտք է ենթադրել, որ դժբաղդ երիտասարդը սպանվել է, բայց մինչև այժմ ոչ մի նշան չէ երևացել, թէ որտեղ է նա նահատակվել։

ԴԷՊՔԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

—

Օզուրգեթիի կեանքը։ Ընթերցողին յայտնի է, որ մեր փոքր, բայց բնութիւնով հարուստ Օզուրգեթը համարեա ամբողջապէս ոչնչացրված է, վաճառականների բոլոր խանութները, բացի 20—30-ից, բոլորը այրված են։ Այրված խանութների պատերը տխուր նայում են, կարծես օգնութիւն են խնդրում իրանց տէրերից։ Մի քանի վաճառականներ վերադարձան իրանց այրված խանութները, և այսօր թէ վաղը կը շինեն նոր, աւելի ամուր շինութիւններ։ Այն խանութներում, որոնք այրվելուց ազատվեցին, համեմատած նախկին խաղաղ ժամանակի հետ, առևտուրը սաստիկ ընկել է, որի պատճառը, ինչ ասել կուզէ, ժողովրդի չքաւորութեան մէջ ընկնելն է։ Գիւղերի բնակիչները սաստիկ վախեցած են, մանաւանդ լրտեսներից, որոնց թիւը Օզուրգեթում շատ նշանաւոր է, և այդ պատճառով բազար չեն վստահանում դուրս գալ բան առնելու։ Ընթերցող, եթէ 10 տարի առաջ լրտեսներից մէկին բարկացրել ես, և այժմ փողոցում պատահել ես, գործը պատրաստ է արդէն. 2-րդ օրը դեռ չը լուսացած, բանտը նստած կը լինես։ Հէնց դա է պատճառը, որ ամեն օր ստրաժնիկները բերում են կալանաւորներին։

Մեր այրված—ոչնչացրած Օզուրգեթում ներկայումս տարածված են բգցաւ և դիֆտերիտ տարափոխիկ հիւանդութիւնները, որոնց զոհ են դառնում բազմաթիւ հիւանդներ երիտասարդ հասակում։ Քաղաքը այս րօպէիս բժիշկ չունի. հարկաւոր է որ քաղաքը աշխատէ մի կերպ բժիշկ հրաւիրել և այդպիսով քիչ թէ շատ օգնել, առանց այն էլ աղքատացած և տանջված, ինչպէս քաղաքի, նոյնպէս մօտակայ գիւղերի բնակիչներին։

Շատ հողատէրեր իրանց արտերը տալիս են գիւղացիներին նոյն պայմաններում, ինչպէս անցեալ տարի, օրինակ, գուրիացի հողատէրերը տուել են գիւղացիներին իրանց արտերը անցեալ տարվայ գներով։

Ներկայ մարտի 17-ին Օզուրգեթում սպասում են Քութայիսի գեներալ-նահանգապետ Ալիխանովին։ Ժողովուրդը վախեցած է ռէակցիօներներից, որոնք ասում են թէ գեներալ Ալիխանովը կրկին անգամ գալիս է կրակ և վիշտ է պատճառելու։

Տեսնենք ինչ կանեն մեզ։

(Պատ. Գազ.)

—

Օնիում (Քութայիսի նահ.) սրանից առաջ կալանաւորել են 20 մարդու իբր քաղաքական յանցաւորների, և ուղարկել են Քութայիս։

(Ցնոբ. Փուրց.)

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

XXXVI

Կարդացէք, ընթերցող «Մշակի» երեկվայ առաջնորդող յօդուածը։

Ես համոզված եմ, որ նա ձեր վրա նոյնպիսի ճնշող, ծանր տպաւորութիւն թողեց, ինչպէս թողեց և իմ վրա։

Մենք հարիւրաւոր դիպլօմաւոր բժիշկներ ունենք, լցված Թիֆլիսում, Բագւում և սակայն երբ բժիշկ է պէտք գաւառ գնալու, երբ ժողովուրդը բժշկական օգնութեան պէտք ունի, ոչ ոք չէ գտնվում, նոյն իսկ մեծ վարձատրութեամբ, գնալու գաւառ և ժողովրդին բժշկական օգնութիւն հասցնելու։

Հոկտեմբեր ամսից Թիֆլիսի հայ կենտրոնական նպաստամատոյց յանձնաժողովը յայտարարութիւններ էր տպում, հրաւիրելով հայ բժիշկներին գաւառ գնալ, նոյն իսկ լաւ վարձատրութեամբ (ամսական 300 ռուբլի) և սակայն գտնվեց միայն մի գաւառացի բժիշկ, որ համաձայնեց գնալ Նախիջևանի գաւառը։

Այսօր Զանգեզուրը բժիշկ է ուզում, Ղազախը բժիշկ է ուզում, Արէշը բժիշկ է ուզում. այսօր տարափոխիկ և այլ հիւանդութիւններ մեծ ճարակ են գտել աղէտների ենթարկված վայրերում և սակայն բժիշկ չէ գտնվում, որ յանձն առնէր գնալ այդ տեղերը և սփոփել թշուառ գիւղական ժողովրդի ցաւերը։ Հայ բժիշկները, մանաւանդ երիտասարդ բժիշկները, նախամեծար են համարում ապրել Թիֆլիսում, Բագւում, թէկուզ նոյն իսկ առանց պրակտիկայի և չը գնալ գաւառ ամսական 300 ռուբլի ռոճիկով։

Սա ինչ է ցոյց տալիս։ Արդեօք ա՞յն՝ որ ժամանակակից հայ ինտելլիգենցիան, հայ երիտասարդութիւնը այնքան ընկել է բարոյապէս, որ այլ ևս ոչ մի իդէալ չունի, այնքան գործնականացել է, որ իր անձի ապահովութիւնը, հեշտասիրութիւնը, ապահով և փափուկ կեանքը գերադաս է համարում, քան իդէալական ձգտումները։ Արդեօք ա՞յն, որ երիտասարդութիւնը նիւթապաշտ է դարձել։ Չը գիտեմ. փաստը այն է, որ մենք բժիշկներ չենք գտնում գաւառները ուղարկելու, իսկ ժողովուրդը տանջվում, ջարդվում է հիւանդութիւններից։

Եւ դեռ գտնվում են մարդիկ, որոնք գանգատվում են, թէ հին գործողները ասպարէզ չեն տալիս նոր, թարմ ոյժերին, և, հետեւաբար, թարմ, եռանդուն տարրերը մնում են անգործ և չը գիտեն որտեղ և ինչ ձևով գործադրել իրանց ոյժերը։

Բայց ուր են այդ ոյժերը, ինչու նրանք երևան չեն գալիս։

Այս երևոյթի վրա խորին ուշադրութիւն պէտք է դարձնել։ Ամեն տարի իրանց ուսումն աւարտում են արտասահմանեան և ռուսական համալսարաններում և բարձր դպրոցներում բազմաթիւ հայ երիտասարդներ և սակայն նրանց ներկայութիւնը չէ նկատվում. կեանքի մէջ նրանք հալվում են, աներևոյթանում։ Ես խօսում եմ, ի հարկէ, հասարակական կեանքի մասին։ Հարկաւոր է բժիշկ, հարկաւոր է փաստաբան, որի գործունէութիւնը մի քիչ գաղափարական և հասարակական բնաւորութիւն ունենայ. մենք չենք գտնում. հարկաւոր է ուսուցիչ, որ գնայ գործի գաւառական, ոչ թէ խուլ անկիւնում, այլ իսկ աչքի ընկնող կենտրոններում. մենք չենք գտնում։

Սով է փոքր ի շատէ գաղափարական բժիշկի, փաստաբանի, ուսուցչի։ Այն հզօր շարժումը, որ մի ժամանակ կար, տեսնվում էր մեր երիտասարդութեան մէջ—գաւառ գնալ, մտնել ժողովրդի մէջ, գործել ժողովրդի համար, աւաղ, այլ ևս չը կայ։ Երևակայեցէք, նոյնիսկ նշանաւոր գաւառական քաղաքները, ինչպէս Շուշի, Ալէքսանդրօպօլ, գործիչներ չեն գտնում քաղաքային ինքնավարութեան ասպարէզում։

Այո, սով է մարդկանց, սով ազնիւ, պարտաճանաչ, գաղափարական մարդկանց։ Բայց ո՞վ է մեղաւոր, որ առաջացել է այդ սովը. ո՞վ է մեղաւոր, որ մեր կեանքը այդպիսի երևոյթներ է արտադրում. ո՞վ է մեղաւոր, որ հայ երիտասարդութիւնը, ուսանողութիւնը համակված և տոգորված է մատերիալիստական, շահախնդրական ձգտումներով, որ նրա սիրտը այլ ևս չէ բաբախում ժողովրդին ծառայելու, մասսաներին օգտաւէտ լինելու տենչանքներով։

Արժէ քննել և լուսաբանել այս հարցը։

Իսկ այժմ թող սև բիծ և արատ մնայ հայ բժշկական դասակարգի, և գլխաւորապէս երիտասարդ տարրի վրա, նրա տգեղ վերաբերմունքը, որ նա, ժողովրդի ճգնաժամի և տանջանքի րօպէին, արձագանք չը տուեց նրա կոչին։

Շահրիար

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Խանքենդ-աւան, 20 մարտի։ Հայ-Թուրքական համագումարը փակվելու ժամանակ Փոխարքան դիմելով պատգամաւորներին, ասաց. «Գործադրեցէք ձեր ազդեցութիւնը յարձակումներն ու թալանը դադարեցնելու համար, ներշնչեցէք ձեր ցեղակիցներին և խաղաղութիւնը կիրականանայ։ Ապա, անկարելի է խլել զէնքերը մի ժողովրդից, որը հազարաւոր տարիներ կրել է այդ զէնքը...։ Անհրաժեշտ է զէնքը խլել բոլոր կազմակերպութիւններից և այն հասարակութիւններից ու անհատներից, որոնք ի չարն են գործ դընում զէնքը»...։ Փոխարքայի օգնական Մալաման էլ իր կողմից միայն մի բան է շեշտում. «Հաւատացէք և ցրվեցէք ձեր տեղերը իբրև խաղաղութեան համբաւատարներ»։

Այն համագումարում Թուրքերը զանազան ձևերով, յետին մտքով Թուրք-հայկական ընդհարման ծագումը փաթթել են հայ կազմակերպութիւնների շնքին, որի պատճառով Փոխարքան իր ճառում շեշտում է, որ Թուրք-հայկական ընդհարման արմատը գտնվում է մի կողմից «հակա-օրինական զինված կազմակերպութիւնների և միւս կողմից աւազակային խմբերի մէջ»։

Տասնեակ օրեր շրջելով Շուշու գաւառի խաղաղարար յանձնաժողովի հետ, ամեն տեղ պարզապէս տեսնվեց, որ կազմակերպութիւնները բոլորովին դէմ են այդ անմիտ կոտորածին և որ նրանց հաճելի և ցանկալի չէ այդ ընդհարումը, որ բարոյապէս քայքայում է երկու ազգին էլ։ Նրանք ամեն ճիգ թափում են դրա առաջն առնելու, վախճան դնելու, բայց այդ նրանց չէ աջողվում, որովհետև Թուրքը շարունակ իր «եան» է առաջ տանում և վրէժխնդիր լինում, այլ և այլ ազդեցութիւնից հարկադրված։ Միւս կողմից «աւազակային խմբերը», որոնք ամեն մի ժամանակ խախտում են երկու կողմից կուած խաղաղութիւնը, գողութիւններ և մարդասպանութիւններ կատարելով, մինչև այսօր էլ մնում են անպատիժ, մի հանգամանք, որ շարունակ խրախուսում, քաջալերում է նրանց՝ աւելին անելու, կամ յետ չընկնելու իրանց արհեստից։ Առաւելապէս որ դրանք մնում են զինված և կը մնան, որովհետև «հազարաւոր տարիներ» կրել են այդ զէնքը և հազարաւոր տարիներ է, որ նրանք այդ զէնքով խլում են հայի աշխատանքը, կովը, եզը, ձին, ջորին, կողոպտում-սրբում տանում են ճակատի քրտինքով տարիներով աշխատած և ձեռք բերած տնային զարդ ու զարդարանքներն ու իրերը, սպանում են չարքաշ գիւղացուն և նրա որդիքը թողնում որբ, Աստուծոյ խնամքին մնացած, իսկ իրանք նորից մնում անպատիժ։

Փաստեր էք ուզում, անթիւ են դրանք՝ ահա պատմութիւնը, դիւանական բոլոր գործերը, դատարանների արխիւները, այժմեան աւերված քաղաքներն ու գիւղերը, վանքերն ու եկեղեցիները, խոպան մնացած հանդերն ու անդաստանները։ Արդէն յայտնի է, որ հազարաւոր տարիներ զէնք կրող ազգից չը պիտի խլվի զէնքը, իսկ կը խլվի կազմակերպութիւններից և այն հասարակութիւններից ու անհատներից, որոնք ի չարն են գործադրում զէնքը։ Հազարաւոր տարիներ է Թուրքը իր զէնքը չարն է գործադրում, նրանով յափշտակում է հայի անասունները, աւերում է հայի ունեցածը, յարձակումներ է անում պօստերի վրա, սպանում է Վիլմանների և խլում պետական հազարաւոր գումարները, հողային վէճերի ժամանակ շարունակ գործը տանում է, որովհետև ոյժը ձեռին է, այդպիսով գրաւած ունի պետական և անհատական շատ հողեր, սպանում է պրիստաւների, ստրաժնիկների և այլն և այլն, և այսօր նրա զէնքը չի խլվի, որովհետև հազարաւոր տարիներ է նա գործադրում է, և ի չարը չէ գործադրում։ Այսպէս Թուրքերը, որոնց համար շատերն ասում են խաւար են, ճարպիկաբար ըմբռնել են, որ հազարաւոր խուժանով այսուհետև անկարող են «եա Ալի» աղաղակելով յարձակվում գործել հայ գիւղերի վրա, որովհետև կը խլվի իրանց զէնքը, որպէս ի չարը գործադրողների, այլ խմբերի բաժանված 6, 10, 158, հոգով զանազան կողմեր շրջելով գողանան հայի անասունները, սպանեն տաւարածներին և ինչ որ պատահի, կամ սպանեն հայ ճանապարհորդներին։ Սա արդէն նրանց նախկին եղանակն է, որ կատարվում էր ընդհարումից առաջ և ոչ մի պատիժ չէին ստանում։

«Մշակ» լրագրի № 57-ում ես արձանագրեցի, որ Թուրքերը խախտելով գաւառում քարոզված խաղաղութիւնը, սպանել են երեք հայերի, ապա գողացել սրա և նրա անասունները և մինչև այսօր մնում են անպատիժ, ազատ շրջելիս. այսօր հարկադրված եմ նորից արձանագրելու, որ ամսիս 17-ին Թուրքերը Նախիջևանիկ հայ գիւղի հանդից քշել տարել են 14 անասուն և նրա պահապան Բաղշի Բալասանեանցին, 13 տարեկան պատանուն։ Քրդերը նոյն օրը յարձակվել են Բալլուջայ գիւղի հանդում արածող նոյն գիւղի անասունները քշելու, բայց տաւարածների հարա-հրոցի վրա գիւղից հասնում են զինված մարդիկ և մի կերպ ազատում իրանց անասուններին։ Թուրքերը յարձակվել են Ղըզլայ գիւղի երկու հայի վրա սպանելու, որոնք հանդում իրանց արտերը ջրելիս են լինում, բայց պատահաբար հայերի մէկի մօտ հրացան է լինում և նա քաջաբար յետ է մղում Թուրքերի յարձակումը։ Ամսիս 19-ին Մալիբէկլուի Թուրքերը յարձակվում են, իրանց գիւղի մօտով անցնող խանքենդցի Համբարձում և Ամիրջան Մելքումեանցին սպանելու, որոնք անզէն են լինում, բայց գնդակների տարափի տակ նրանք կարողանում են փախչելով ազատվել։ Այժմ թող Թուրքերը հանդէս գան և ի լուր աշխարհի հրատարակեն, թէ ո՞ր հայը Գօլոշչապօվի գալուց յետոյ այս կամ այն յանցանքն է գործել։

Արդ, եթէ հազարաւոր տարիներ զէնք կրող ազգից անկարելի է զէնք առնել, իսկ պիտի զինաթափ անվեն կազմակերպութիւնները կամ հասարակութիւնները, ինչո՞վ կարելի է յարձակումները յետ մղել, այն աւերումների առաջն առնել, որ Թուրքերը սար բարձրանալիս ենթարկում են հայերի բանջարանոցները, արտերը, այգիները, խոտահարքերը և այլն։ Ե՞րբ չեն Թուրքերը սարից իջնելիս իրանց նախիրների հետ քշել տարել հայերինը և սուտ վկաներ կանգնեցրել, որ նա իրանց է պատկանում, հայերն են գողացել։ Բայց քանի՞ մէկը կարելի է թւել։ Հայերին երբէք զէնք պէտք չեն, եթէ հազարաւոր տարիներ զէնք կրող Թուրքերը զինաթափ անվեն։

Հին ժամանակներում գողութիւն եղած դէպքերում հայը Թուրքի առաջ էր դուրս գալիս իր կոմբալ մահակով, և Թուրքը դաշոյնը խրելով նրա փորը և թափելով աղիքները, քշում տանում էր նրա սիրելի եզները, իսկ այսօր հայը ինչով պէտք է պատասխանի, եթէ զինաթափ լինի, (շատ տեղերում արդէն զինաթափ է արված) հազարաւոր տարի զէնք կրող Թուրքի ձեռքի սիւզանին (մօսինի հրացան), դարձեալ կոմբալ մահակո՞վ։ Շատ կարելի է կասէք, որ դրա համար իշխանութիւն կայ, ոստիկաններ և պրիստաւներ կան, նրանք դրա առաջը կառնեն։ Բայց այժմեան ժամանակում իշխանութիւն չէ տեսնվում, որովհետև արդարադատութիւն ասած սկզբունքը վերացված է, ոստիկաններն ու պրիստաւներն էլ Թուրքերի երկիւղից ամեն բան անտես են անում. նրանք Թուրքերի արարքների մասին հարկադրված են լինում մատերի արանքով նայել, կամ շատ շատ մի արձանագրութիւն կազմել և յանձնել քննիչին, իսկ այդ տեսակ արձանագրութիւններ տարիներով, չեմ ասում ամիսներով, քնած են լինում քննիչի մօտ և նոյն աւազակ Թուրքը նորից շարունակում է իր պապական փեշակը, աւազակութիւնը և մարդասպանութիւնը։

Փաստերը աչքներիս առաջ դեռ կենդանի են, որ Թուրքական մասում, պրիստաւների աչքերի առաջ կոտորեցին հայերին, մաս-մաս յօշոտեցին և նրանք ստիպված էին չը տեսնելու ձևանալ, լռեցին և յանցաւորները մնացին անպատիժ, իսկ հայ անմեղները այսօր փտում են բանտերում և աքսորատեղերում, որովհետև իրանց դէմ սուտ ամբաստանութիւններ էին արվել: Մաղաղարար յանձնաժողովի հետ շրջելիս, տեսնվեց որ բ. մասի վրացի պրիստաւը Թուրքերից փախել հայ գիւղում էր ապրում, որովհետև կամեցել էր ձերբակալել 2—3 աւազակների, իսկ Թուրքերը ընդդիմացել և մինչև անգամ կամեցել են սպանելու նրան (երևի սա անփորձներիցն է, որ իր պարտականութիւնը ուզեցել է կատարելու): Իմ հարցիս՝ ինչու չէք ույժ գործ դնում, Թուրքերը միայն այդ տեսակ բաներից են վախում, նա ժպտալով պատասխանում է «4—5 ստրաժնիկով ինչ ույժ կարելի է գործ դնել, այդ ամենը նրանց համար միայն մի Թիքա է»: Արդարև, երբ Ալիանլուի և Սափիանլուի Թուրքերը ընդդէմ էին կանգնել գեներալ Գօլօշչապօվի ուղարկած հարիւրաւոր կօզակներին և Թնդանօթներին, ինչ կարող է անել մի պրիստաւ 4—5 ստրաժնիկներով հազարաւոր տուրիներով զէնք կրող և նրա մէջ վարժված Թուրքերին: Ահաւասիկ հէնց այդ է պատճառը, որ երբ Նախիջևանիկեցիք եկան և բողոքեցին տեղիս պրիստաւին, որ սա շրջապատէ Թուրք գիւղերը և ազատէ իրանց անասունները, աւաւելապէս յափշտակված տաւարապահին, սա դժուարացաւ այդպիսի երկիւղալի տեղեր գնալ և գանգատաւորներին ուղարկեց գաւառապետի մօտ, որ սա տեղից գնդապետից կօզակներ խնդրէ, որոնց ուղեկցութեամբ կարողանայ գնալ Թուրքական գիւղերը, իսկ տեսէք թէ այդ պրիստաւներն ու ստրաժնիկները, թէկուզ լինի հէնց միայն մէկը, հայ գիւղերում ինչ հրաշագործութիւններ են անում, կապշէք, սարսուռ կը զգաք, որովհետև հայը մարդասպան չէ, սարսափեցնող ազգ չէ, խոնարհ չարքաշ-մշակ է, հլու հպատակ է, թէև այժմ նրան այլ գոյներով են ներկայացնում իշխանութեանը:

Փոխարքայի պալատում կայացած Թուրք-հայկական համագումարը ինչի համար որ կազմվել էր, անկարող եղաւ իր նպատակին ծառայել ինչպէս որ Փոխարքան էլ նկատել էր իր ճառում. «Ձեր նիստերում դուք շօշափել էք մի շարք հարցեր, որոնց մեծամասնութիւնը չէ լուծում ներկայ րօպէի անյետաձգելի պահանջները»: Աաւելապէս այդ համագումարը կորցնում է իր նշանակութիւնը, երբ ժողովրդին խաղաղացնելու պարտքը Փոխարքայի և նրա օգնականի կողմից դրվել է պատգամաւորների վրա: Քանի, քանի անգամ են Բագւում Թաթարներ կազմվել, միմիանց հետ համբուրվել. նոյնը Երեւանում, Նախիջևանում, Շուշում, Գանձակում և այլ տեղերում. իսկ այդ ամենի հետևանքը եղել է նորից կոտորած, աւերմունք, հրդեհներ...: Արդեօք ինչով էք երաշխաւորում, որ նոյնը չէ կրկնվել այսուհետև: Փօլօշչապօվները միայն կարող են զսպել Զանգեզուրի քրդերին և Աղդամու հրոսակներին: Այժմ դեռ ծառերը մերկ են, եղանակները ցուրտ, հանդերը առանց խոտի. երբ այս ամիսը կը լրանայ, ծառերը կը տերևակալեն, եղանակը կը տաքանայ և խոտը կը բսնի, որ ձիաները սոված չը մնան, տեսէք թէ խեղճ հայի վրա քանի հրացաններ պէտք է տրաքվեն ծառերի արանքից, որովհետև այդ Թուրքի յատկութիւնն է, կաթի հետ մտած և կազմակերպած սովորութիւնն է:

Սակայն այդ համագումարում Թուրք պատգամաւորները մեծ ճարպիկութեամբ, խնամքով ծրագրված ու մշակված եղանակով կարողացան իրանց ցեղակիցների արարքների— սպանութիւնների, աւերումների, հրդէհների և այլ յանցագործութիւնների պատճառը և դրանց ծագումները փաթաթել հայ կազմակերպութիւնների շլինքին: Սա պատմական անջնջելի մի մեծ ակտ է: Թուրքը, որ դարերով պարապվում է գողութիւնով, ասպատակութիւնով և մարդասպանութիւնով, այսօր կարողացաւ արդար հռչակվել կամ բոլոր արարքները քօղարկած դուրս գալ: Եւ դեռ կան մարդիկ, որոնք ուզում են հաստատել, թէ Թուրքերը խաւար են, ոչինչ չեն հասկանում:

Այս կերպ բռնած եղանակով երաշխաւորել չի կարելի, որ խաղաղութիւնը կը վերականգնվի և յարատև կը լինի:

* * *

Փարպի, 20 մարտի: Հանրածանօթ մի իրողութիւն է, որ գաւառամասերում պրիստաւները ամենահզօր մարդիկն են համդիսանում և գիւղացիութիւնը համարեա թէ ամեն բանում անօրկայ, շատ անգամ կուրօրէն հնազանդվում է նրանց: Իր շուրջը կատարվող երևոյթների վրա քննադատական աչքով նայելու ընդունակութիւնը կարծես թէ միանգամայն բացակայում է գիւղացու մէջ: Նշանակովի մարդկանց ձեռքին խաղալիք դառնալը, նրանց սուր պահանջներին, քմահաճոյքներին ենթարկվելը կարծես թէ սովորութիւն է դառել գիւղացու համար: Առանց իր համար պարզելու, առանց հասկանալու՝ նա կատարում է վերևից արված պահանջները, թերևս նրանք լինեն միանգամայն յիմար ու ապօրինի: Այս հանգամանքը շատ լաւ ծանօթ է ամենահզօր պրիստաւների ահագին մեծամասնութեան, որոնք հէնց իրանք ամեն կերպ աշխատել են նպաստած լինել գիւղացու ինքնագիտակցութեան սպանման, որպէս զի 1) աջողութեամբ սրբութեան տեղ ընդունել տան ամեն մի բարձր աստիճանաւորի գլխից ցնդած հրամանը և այդպիսով շահեն նրանց սիրտը և հարթեն իրանց համար առաջ գնալու ճանապարհը և 2) աւելի ևս աջողութեամբ ածեցնեն իրանց անտակ գրպանները: Պոլիցիականներից շատերը երկրորդ կէտը դարձնում են նպատակ, որին հասնելու համար միջոցների մէջ խտրութիւն չեն դնում:

Այսպիսիներից էր մեր գաւառամասի պրիստաւ Գօգօբերիձէն, որը ի մեծ ուրախութիւն բոլորիս, հեռացվեց պաշտօնից: Նրա «տեղի ու անտեղի» կաշառակերութիւնը մեղանում հեկայական չափերի էր հասել. բոլորն էլ համոզված էին, որ նրա մօտ առանց «քթժամի» գնացողը «լոյսի» երես չի տեսնի: Ժողովրդի գանգատը (պրիստաւին լաւ ճանաչող) խաւարում լուր է պատում, թէ նրա վերցրած կաշառքը այս չորս տարվայ ընթացքում հասնում է տասնեակ հազարների: Իր տանն էլ շռայլ կեանք էր վարում... Հասարակութեան հաշւով...

Ուրախ ենք, որ նա վերջապէս գնաց: Աւելի ևս ուրախ ենք, որ նրան փոխարինում է մի խիստ որ չէտակ, ազնիւ և հասարակական շահերին ծառայող մարդ, պ. Դումբաձէ: Սա՝ Դաբալագեապում ծառայած ժամանակ, ամենակարճ ժամանակամիջոցում գրաւեց ժողովրդի սէր ու յարգանքը, շնորհիւ իր անաչառ, բարեխիղճ բնաւորութեան և ժողովրդի օգտին ուղղած գործունէութեան.—ամեն ջանք գործ էր դնում ճանապարհները կանոնաւորել, կամուրջներ շինել, դպրոցներ բանալ և այլն: Պ. պրիստաւը, մեր կարծիքով մի գեղեցիկ բացառութիւն է կազմում պօլիցիականների մէջ: Այնուամենայնիւ մեր գաւառամասն էլ պէտք է յուսայ, որ պ. Դումբաձէի դրական գործունէութեան պտուղները վայելելու բախտը կունենայ:

Հէնց երէկ, ամսիս 19-ին, Աշտարակում նա ունեցաւ մի ժողով, որի նպատակն էր Աշտարակի համար մաքուր ջուր հանել տալ: Այդ հարցը վաղուց ի վեր ծեծվում է Աշտարակում, սակայն մինչև այժմ լուծված չէ: Աշտարակ գալով պ. պրիստաւը ամենից առաջ իր ուշադրութիւնը դարձնում է գիւղացիների համար այդ աւելի քան կարևոր հանգամանքի վրա և մի գեղեցիկ միտք է յղանում. առանց ժամանակ կորցնելու գործի գլուխ անցնել և ի կատար ածել գիւղացիների ցանկութիւնը: Մեծ ուրախութեամբ ընդունեցին գիւղացիք պ. պրիստաւի առաջարկը և անմիջապէս ընտրեցին իրանց միջից 7 հոգուց բաղկացած մի յանձնաժողով, որը պ. պրիստաւի ղեկավարութեամբ պէտք է միջոցներ ձեռք առնէ՝ գիւղը ջուր բերելու համար: Մենք, յայտնելով մեր համակրանքը և շնորհակալութիւնը պ. պրիստաւին՝ նրա ձեռնարկած գործի համար, անկեղծօրէն ցանկանում ենք, որ նրա սկսած գործը պսակվի կատարեալ աջողութեամբ:

Գիւղական

ՊԵՐՃԱԽՕՍ ԹՒԵՐ

Մինչև այժմ յայտարարված պաշտօնական գրութիւնների հիման վրա, անցեալ տարվայ յունվարի 9-ից մինչև ներկայ 1906 Թւի յունվար ամիսը, սպանութիւնների ու խեղանդամութիւնների Թիւը անցնում է 30,000-ից:

«Биржев. Вѣд.» Թերթը, յիշեալ գրութիւնների հիման վրա, տալիս է մեզ աւելի ստոյգ, ամփոփ Թիւ, կցելով այդ «տարեկան հաշւին» 1906 Թւի յունվար և փետրվար ամսի զոհերի Թիւը ևս:

Թերթը յունվարի 9-ի զոհերի Թիւը յիշատակել է նոյնքան, որքան ցոյց է տրված «Прав. Вѣст.»-ում և այն էլ մինչև երեկոյեան ժամի 8-ը, իսկ թէ որքան է ստացվել 8-ից յետոյ, որքան է տարված հիւանդանոց, որքան մասնաւոր հիւանդանոցներ և տներ, այդ դեռ անյայտ է, դժուար էլ է որոշել:

Այդ ձևով է կազմել Թերթը իր «ստատիստիկան» շարունակելով մինչև Մոսկվայի ապստամբութիւնը, Պրիբալտեան երկրի կռիւները և գնդակահարութիւնները, և գեներալ Ռենենկամֆի պատժական սխրագործութիւնները:

Կովկասեան զոհերի մասին, չը նայելով որ տեղեկութիւնները, Թւերը կազմված են պաշտօնական լրագրական աղբիւրներից, բայց և այնպէս Թերթը ինքն էլ կարծում է, որ հազիւ թէ մօտաւոր minimum-ը լինի (թէ կոտորածի և թէ ճնշման ժամանակ): Այդ ստատիստիքական տեղեկութիւնները կազմում են միայն մօտաւոր minimum-ը ընդհանուր զոհերի, որովհետև ընդհանրապէս յայտնի են լինում ծանր վիրաւորվածները, իսկ թեթևները տներն են տանում, բացի դրանից մասնաւոր դէպքերը, որով լիքն են լինում առհասարակ թերթերը, չեն մտնում դրա մէջ: Իսկ թէ որքան մօտաւոր ճշտութիւն ունեն այդ պաշտօնական Թւերը, երևում է մի այսպիսի օրինակից. յունվարի 9-ի զոհերի Թիւը մի թերթում յիշվում է 3000, իսկ «Правит. Вѣст.»-ում 300. ինչպիսի զանազանութիւն:

Ահա, այդպիսի թերութիւններով հանդերձ, բաւականին հետաքրքրական ու ուշադրաւ է դարձեալ այդ ստատիստիքան, որ առաջ ենք բերում:

Պետերբուրգի, Մոսկվայի, Պրիբալտեան, Սիբիրի, Լեհաստանի և Ռուսաստանի այլ մասերում սպանվել են 11,799 հոգի, վիրաւորվել են 14,141 հոգի, իսկ Կովկասում և Անդրկովկասում վիրաւորվել են 3911 հոգի և սպանվել 2855 հոգի: Ուրեմն ընդամենը վիրաւորված են՝ 18,052 և սպանված՝ 14,654 հոգի. իսկ զոհերի ամբողջ Թիւը հաւասարվում է 32,706: Սակայն դրա վրա պէտք է աւելացնել շատ ու շատ դէպքեր, շատ ու շատ Թւեր, անյայտ մնացած, գնդակահարված, բանտերում, աքսորավայրերում... որոնք այդ ազատագրական շրջանի զոհերն են կազմում:

ՏԽՐԱՀՌՉԱԿ ԺՈՂՈՎՆԵՐ

Հետաքրքիր Թաղական ժողովներ են կայացրել Մոսկվայի «Միապետական» և «Ռուս ժողովրդի միութեան» կուսակցութիւնները մարտի 15-ին և 16-ին յայտնի յետադէմ և խաւարամիտ Վ. Գրինգմուտի նախագահութեամբ:

Ժողովի առաջին օրը զանազան մասլահաթներից յետոյ նախագահը առանձին հրճուանքով յայտնել է ժողովին ծովապետ Դուբասօվի խօսքերը—չը թոյլ տալ ուսանող երիտասարդութեան մասնակցելու քաղաքական շարժման: Այս խօսքերը այնքան դուր են եկել այս խմբակին, որ վճռել են կայացրել մի սրտառուչ հեռագիր ուղարկել յիշեալ ծովապետին: Ժողովի մասնակցողների մէջ է եղել և տխրահռչակ Վօստորգօվ քարոզիչ քահանան, որը պետութեան ծայրագոյն մասերի վրա խօսելով (իմա Կովկաս) յայտնել է, թէ որքան ծանր է ռուս մարդկանց համար Ռուսաստանում ապրելը, երբ նրանք երկրի կենտրոնից հեռանում են:

Աւելի կատակերգական կերպարանք է ստացել հետևեալ օրվայ (15 մարտի) ժողովի «մասլահաթը»: Այդ օրը ժողովի մէջ առաջին խօսողը եղել է հայր Վօստորգօվը, որը յայտնել է թէ ինքը ինչ ծանր տպաւորութիւն է ստացել Կովկասում ապրելով և Սիբիր ճանապարհորդելով: Ամեն տեղ, նրա կարծիքով, ռուս մարդիկ հալածված են, նեղութիւններ և ճնշումներ են կրում այլացեղ ազգերից, նոյն իսկ ռուս իշխանութիւնից (!?)...

Հայր Վօստորգօվի մարգարտաշար խօսքերի հաստատող լոյս է ընկել Պ. Ի Պրոտօսևիչը, որը երկար ապրել է Կովկասում և Անդրկովկասում: Սա էլ իր Թոյնը Թափել է հայերի գլխին, յայտնելով թէ հայերի վարմունքը ռուսների և... մուսուլման-Թաթարների հետ վրդովեցուցիչ է... Իշխանութիւնն էլ անգործունեայ է: Ամենից վերջը բերանը բաց է արել նախագահ Գրինգմուտը, ցոյց տալով թէ որքան վտանգաւոր է այլացեղ ազգերի լուծը ռուսների համար, երկրի ծայրամասերում և աւելի նա վտանգաւոր պիտի դառնայ, երբ այդ այլազգիները իրանց ինտրիգներով իրանց ձեռքը կը գցեն Պետական Դուման: Այդ բանին օգնում են նոյն իսկ ռուս մարդիկ իրանց ինտրիգներով, ասել է նա, որոնք ընդդէմ են Ցարի ինքնակալութեանը և՝ որպէս ապացոյց մատնանիշ է արել «Սահմանադրական-դեմոկրատական» կուսակցութեան վրա, որը, իբր, կեղծ և սուտ կոչեր է հրատարակել:

Ինչպէս երևում է՝ առաջադէմ տարրի յաղթութեան դափնիները կտրել են Գրինգմուտի և ընկ. քունը և անձ այդ խմբակը մխիթարում է իրան այդպիսի բարբանջանքներով:

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

(Շարունակ. № 64)

Մարտի 17-ին նիստը բացվեց մօտաւորապէս ցերեկվայ ժամի 1-ին, դատախազի օգնական Մակալինսկու հետևեալ ճառով:

«Մութ դժոխքի խորքերից, անեղ իր ցինիկութեամբ, դուրս ժայթքեցին փետրվարեան օրերը և կարմիր բոցերով ծածկեցին կէլտուրական մարդկութեան ու նրա մտքի ու սրտի կատարելագործութեան նուիրված անդուլ ջանքերի վրա: Այդ երեք օրերը, դժոխքի երեք անդղները չարագուշակ կանչոցով սլացան ռուսաց Թագաւորութեան հրաշալի պարտէզի վրայից, յայտարարելով իրանց այցելութեան մասին: Եւ այսօրից սուր կսկիծ երկրպագողը ու դարձրեց նրան իր այն հարևանի դէմ, որի հետ միասին դարեր շարունակ միջակում էր նոյն երկիրը: Արիւնով ողողվեցին պարտէզի ծառուղիները և կորցրեց նա իր նախկին գեղեցկութիւնը: Այո, պ. պ. դատաւորներ, կասկած չը կայ, որ փետրվարեան անցքերը կը բաժանեն Կովկասի պատմութիւնը երկու հատորի, որոնցից առաջինը, ի միջի այլոց կը խօսէ նրա մէջ բնակվող ցեղերի միասնական համերաշխ կեանքի մասին, իսկ երկրորդ հատորի, առաջին էջերը կը նկարագրեն մեզ այն պատճառները, որ խախտեցին Կովկասեան ցեղերի բարեկամութիւնը և այն տեսարանները, որ սառեցնում էին, վաղուց ի վեր հաշտ ապրող երկու ազգերի, մուսուլմանների ու հայերի իրար ընչելու ջանքերից: Ո՞րտեղ է, ուրեմն, այդ դժբաղդ պատահարի սկզբնապատճառը: Ո՞ւր է այդ սարսափելի անդղների բոյնը:

«Այդ հարցերին, մենք, մասնաւոր դէպքեր ուսումնասիրողներս, չենք կարող վճռական պատասխան տալ, այլ նրանց կը պատասխանէ անաչառ պատմաբանը, որը, ինչպէս բժիշկ, դիակնահատական, չի սխալվիլ դիագնոզի մէջ (անատոմիզում): Ինչ վերաբերում է ինձ, իբրև մեղադրող, որ պնդում եմ թէ մեղադրվողները յանցանքը կատարել են ցեղական Թշնամութեան հողի վրա, ես բաւական եմ համարում շօշափել այդ կատաստրոֆը առաջ բերող ամենամերձաւոր պատճառները: Այդ պատճառներն էին՝ Ենգօյեանցի սպանութիւնը Աղա-բալայի ձեռքով, վերջինիս սպանվելը ուղեկցող հայ—գինուորների ձեռքով և, վերջապէս, Բաբայեվի սպանութիւնը: Ես մանրամասն չեմ նկարագրիլ այդ սպանութեան դէպքերը, որովհետև չեմ ցանկանում շարժել դեռ ևս չառողջացած վէրքերը. այդ դէպքերի մանրամասն նկարագրութիւնը դուք կը գտնէք դատաստանական քննութիւնների մի քանի հատորների մէջ, իսկ Բաբայեվի սպանութիւնը մանրամասն կերպով յիշատակված է մեղադրական արձանագրութեան մէջ:

«Այստեղից, դատախազական ամբիոնից, ես անկեղծաբար յայտնում եմ, որ ես չեմ շօշափիլ այդ սուր հարցը, որովհետև ի բոլոր սրտէ հետևում եմ այս խօսքերին. «Գնացէք, սերմանեցէք խաղաղութիւն»: Ես սիրում եմ Կովկասը և նրա բնակիչներին, առանց ազգութիւնների մէջ խտրութիւն դնելու»:

Ինչպիսի բերկրանքով և ոգևորութեամբ ունկնդիր եղան տանջվող ազգութիւնների ընտրեալները այդ խօսքերին:

«Ուրախութեամբ պէտք է համակէ այդ խօսքերը ռուսների և ուրիշ ազգութիւնների սրտերը, իսկ նամանաւանդ Կովկասում ապրողների, որոնք աղ ու հաց են կիսում մուսուլմանների ու հայերի հետ և ականատես լինելով համոզվեցին, թէ ինչպիսի սարսափելի արգելք է հանդիսանում ազգայնական պառակտումը տնտեսական և հասարակական կեանքի մէջ, հետևապէս և ոչ միայն նոյն երկրի կուլտուրայի, այլ և ամբողջ պետութեան համար: Թէ ինչ պատահեց Բաբաեվի սպանութիւնից յետոյ, այդ հէնց նոր լսեցինք և մինչև իսկ ականատես էլ ենք եղել: Ուստի վկայելով հանդերձ մուսուլմանների ու հայերի մէջ տեղի ունեցած մասսայական ընդհարումների փաստը, մենք այնուամենայնիւ մասնակի յանցանքներ կատարողների վերաբերմամբ պէտք է գործադրենք դատաստ. պատժակ. օր. 269 յօդուածը:

«Այժմ ես կանչնում ձեր դատաստանին յանձնված, յիշեալ յօդուածի հովանու տակ, անձանց կատարած մասնակի յանցանքների քննութեանը: Կարծում եմ, որ ես ճշգրիտ եմ հասկանում գործարանական և նաւթահանքերի բանւորների առօրեայ կեանքի պատկերը: Աշխատելով քովէ քով, ապրում են նրանք միասին մի յարկի տակ, այսպէս կոչված բանւորական բնակարաններում:

«Նրանք միասին են ուտում, միասին հանգստանում, միասին են քննում իրանց շահերն և միասին էլ պաշտպանում նրանց: Եթէ խօսելու լինենք եղբայրութեան մասին, այն ժամանակ բանւորական միջավայրը աւելի, քան մի ուրիշը կարող է համարվել եղբայրական, որովհետև նա սերտ կերպով շաղկապված է մի ամբողջ ընդհանուր կեանքով: Թերթեցէք քննիչների կատարած հարցաքննութիւնների բոլոր հատորները և դուք կը տեսնէք, որ փետրվար ամսում մուսուլման և հայ բանւորների մէջ ընդհարումներ համարեա տեղի չեն ունեցել, և եթէ նաւթահանքերի շրջանում այդպիսիներն էլ պատահել են, դրանք եղել են նաւթահանքերի շրջանին մօտիկ գտնվող գիւղերի մուսուլման բանւորների և հայերի մէջ, այլ ոչ նաւթահանքերում: Ահա թէ ինչու պ. պ. դատաւորներ, ես ասում եմ, որ Քերիմ Մահմուդ-օղլին, մասնակցելով բանւորների կոտորածին, արդարև կատարել է եղբայրասպանութիւն, Աբելին սպանող Կայէնի նման:

«Եւ որ Քերիմ Մահմուդ-օղլին մասնակցել է այդ կոտորածին ես, այդ բանում ամենևին չեմ կասկածում և ահա թէ ինչու:

«Քերիմի դէմ վկայութիւն են տալիս իր պաշտօնակիցները, մի և նոյն բանւորները. Բաղդասարեան, Մնացականեան և Ստեփանեան: Դրանք ամենքն էլ վիրաւորվել են, իրանց ասելով, Քերիմի ձեռքով, իսկ Նիկոլայ Ջավադեանին նա նոյն իսկ սպանել է: Նախ կանգ կառնեմ այն խնդրի վրա, թէ կարո՞ղ են արդեօք, այդ անձանց վկայութիւնները վստահելի լինել, թէ ոչ: Ինչու նաւթահանքի 150 հոգի մուսուլման-բանւորների միջից այդ Թշուառները, էլէկտրական անակում յանկարծակի վիրաւորված ու կոտորվածները, մատնացոյց արին միայն Քերիմ Մահմուդ-օղլուն և պնդում են որ իրանց վիրաւորեց նա, այլ ոչ ուրիշը: Եթէ նրանք զրպարտում լինէին Քերիմին անձնական Թշնամութիւնից, ատելութիւնից դրդված և այլն, այն ժամանակ առաջին նկատողը այդ մասին հէնց ինքը Քերիմը կը լինէր: Այնուամենայնիւ նա այդ տեսակ յարաբերութիւնների գոյութեան մասին մի խօսք անգամ չասաց:

«Երևի, նա դրա մասին չը խօսեց, որովհետև այդպիսի յարաբերութիւններ Քերիմի և իրան ամբաստանողների մէջ չէ եղել: Ուրեմն ինչպէս կարելի է ենթադրել, որ այն վկաները, որոնք մանրամասն կերպով նկարագրեցին Քերիմի վարմունքը անակում իրանց վիրաւորելու ժամանակ, հնարել են այդ մեղադրանքները բացառապէս Քերիմի դէմ: Եթէ նրանք ուզենային նրանից վրէժ լուծել, իբրև մուսուլմանից, ինչն էր արգելում նրանց Քերիմին կցել երկու, երեք, նոյն իսկ 20 մարդիկ էլ մի և նոյն մուսուլման-բանւորներից:

«Բայց նրանք այդ բանը չեն անում և դրանով հարկադրում են մեզ հաւատալ, որ նրանց մեղադրանքները արդարացի են:

«Փորձեց Քերիմը հիմնվել վկայ-ալիբիսի, Կօստանդին Սարգիսեանի վրա: Բայց ինչ դուրս եկաւ: Այդ վկան, փոխանակ պաշտպանելու, պարզ կերպով վկայեց, որ այն բոլոր մուսուլման—բանւորներից, որոնց ինքը անցքերի սկզբում Թագցրել էր վիշկայի մէջ, իր վերադարձին տեսել է բոլորին այնտեղ, բացի Քերիմ Մահմուդ-օղլուց, որի մասին նրանք սկսեցին իսկոյն պատմել, որ նա մասնակցել է իր պաշտօնակից-բանւորների կոտորածին:

Եւ այդպէս էլ պէտք է լինէր: Քերիմի մասնակցութեան մասին եղած խօսակցութիւնները անշուշտ պէտք է անմիջապէս տարածվէին, որովհետև վիրաւորները իսկոյն պատմեցին իրանց օգնութեան եկող Աստուածատուրեանին և Շահնազարեանին որ իրանց վիրաւորել է Քերիմը: Օգնութեան հասնող այդ երկու հայերը փախել, Թագնվել էին, առաջինը՝ վիշկայի բալկօնում, իսկ երկրորդը՝ պաղ շագեկաթսայի մէջ. լսում էին զոհերի լացը, մռմռոցները, ագերսում էին խնայել իրանց և, հետևապէս, գտնվում էին էլեկտրական անակին, այդ հին-հռովմէական Ներոնի ժամանակների ասպարէզի, կրկէսին մօտիկ, և այդ պատճառով զարմանալի չէ, որ նրանք ամենից շուտ վազեցին վիրաւորների մօտ և լսեցին նրանց արիւնոտ շրթունքներից գանգատը Քերիմի դէմ և դրա մասին էլ իսկոյն տարածեցին բանւորների մէջ: Բայց մի րօպէ ենթադրենք, որ վիրաւորների և համարեա այդ մերձիման մարդկանց ցուցմունքները Քերիմի վրա Բաղդասարեանի Թագրած Թեթևամիտ խօսքերն էին, բայց ախր, պ. պ. դատաւորներ, այդ նոյն ցուցմունքները կրկնեցին Բաղդասարեանը և իր ընկերները բաւականին ժամանակ յետոյ, հիւանդանոցում իրանց այցելողներին, և նրանց, որոնք տեսնվել էին հետները հիւանդանոցից դուրս գալուց յետոյ: Քերիմը այժմս էլ աշխատում է վերականգնել իր ալիբին (չքմեղութիւնը) և հիմնվում է նոր վկաների վրա, որոնցից առաջինն է Մանթաշեանի մօտ ծառայող մի ինչ որ գրասենեկապետ, որի անունը Քերիմը մեզ չէ ասում և որին դատարանը չը կարողացաւ գտնել: Եւ շատ ափսոս! Գուցէ այդ վկան էլ այնպէս պաշտպանէր Քերիմին, ինչպէս որ պաշտպանեց Կօնստանտին Սարգիսեանը: Ինչ վերաբերում է Քերիմի միւս վկաներին, կարող եմ ասել միայն, որ նրանք ուշացել են և կորցրել են իրանց հմայքը... Այդ վկաները յիշվում են Քերիմի կողմից դատարանին ներկայացված խնդրի մէջ, որը տրված է իր բանտարկութիւնից շատ յետոյ. իսկ թէ ինչպէս են այդ վկաները յայտնվում, մենք արդէն գիտենք, և ես համոզված եմ, որ դուք կը հաւատաք նրանց ոչ պակաս, քան իրան մեղադրվողին:

«Այդպիսով, ես համարում եմ Քերիմի դէմ յարուցած մեղադրանքը ապացուցված:

«Պակաս եղեռնագործութիւն չէ արել և Ռահիմ Մօլլա-Հաջի օղլին, խենջալելով հարուածելով Ցարութիւնեանին:

«Երևակայեցէք, պ. պ. դատաւորներ, բանւոր Ցարութիւնեանին, որ մի այսպիսի տագնապալի ժամանակ աշխատում է գնալ իր ընտանիքի մօտ հայկական գաղութը: Դողդողալով, աղօթքներ մրմնջալով կեանքը փրկելու համար, նա գնում է նաւթահանքերի միջով և յանկարծ հանդիպում է մի մուսուլման-բանւորի: Նուաստաբար, միայն թէ խօսէ նրա հետ, որպէս զի կարողանայ իմանալ Թշնամի է նա թէ ոչ, դիմում է Ցարութիւնեանը նրան միամիտ հարցով. ո՞ւր է ճանապարհը: Բայց նրա վրա այնպէս նայեց Ռահիմ-Մօլլան, որ Ցարութիւնեանը սկսեց փախչել առանց յետ նայելու: Եւ ինչ: Հետամուտ եղաւ Ռահիմ-Մօլլան, այդ հայատեացը, Յարութիւնեանի յետևից իր ատելութեանը յագուրդ տալու համար: Ո՛չ: Նա վազում է բանւորների բնակարանը, ընտրում է իր նման մի քանի սրիկաների, որպէս զի բոլորովին ապահով լինի, և նրանց հետ միասին բռնում է որսալ Ցարութիւնեանին, վազում հասնում է նրա յետևից և հարուածում է խենջալով մի քանի տեղերից: Ապա, իր արածի արդարացիութեան գիտակցութեամբ, բացարձակ, ցինիկաբար, մի ձեռքում բռնած արիւնոտ խենջալը, իսկ միւսում՝ ատրճանակը, վերադառնում է իրանց բնակարանը. Այդ ամենը կատարվում է ոչ միայն հայ ականատեսների առաջ, այլ և ռուս ընտանիքների՝ Լօպացկիների, Շիմանսկու և Եկիսեևին: Թւում է, որ Ռահիմ-Մօլլա օղլին, այդ բոլորից յետոյ, պէտք է խոստովանէր իր արած յանցանքը և խնդրէր ձեզ մեղմացնելու իր վճիռը:

«Բայց ոչ! Նա այստեղ էլ է ուզում մոլորեցնել մեզ ճիշտ այնպէս, ինչպէս որ խաբեց Ցարութիւնեանին. պատմում է, որ իբրև թէ իր վրա յարձակվեցին ատրճանակներով զինված հայեր և փորձում էին կրակել նրա վրա ատրճանակներից: Բայց, բարեբաղդաբար, ինչքան էլ հայերը չխկչխկացնում էին իրանց ատրճանակներով, բայց և այնպէս չէր կրակվում, խլատում էր, (օսէչկա). այն ժամանակ նա յարձակվեց նրանց վրա և խենջալով վիրաւորեց մէկին: Յոյս ունեմ, պ.պ. դատաւորներ, որ դուք չէք հաւատայ այդ խլատումներին և «հերոս» Ռահիմ-Մօլլա օղլու պատմութեանը, որ այնպէս անխնայ կերպով վարկաբեկ է անում մեր զինարանները և փամփուշտների գործարանները:

«Ապա ուրեմն, Ռահիմ-Մօլլա օղլու մեղաւորութիւնը նոյնպէս ես համարում եմ ապացուցված:

(Կը շարունակվի)

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՌԻԹՈՎ

II

Անցեալ անգամ մենք Թռուցիկ կերպով յանկացանք ցոյց տալ համագումարի կատարելիք գործի լրջութիւնը և բազմակողմանիութիւնը:

Մի մեծ պարտականութիւն է դրված նրա վրա. կազմել մեր ազգային լուսաւորութեան նոր ծրագիրը:

Նրա որոշումներից է կախված ուրեմն մեր ապագայ դպրոցների կազմը: Ուստի ամենամեծ լրջութեամբ ու գիտակցութեամբ պէտք է վերաբերվել այդ գումարումի կազմին:

Որքան մենք հասկանացանք, համագումարին մասնակցելու են, բացի հոգևորականութիւնից, նաև ներկայացուցիչներ մանկավարժական դասակարգից ու հոգաբարձութիւնից:

Մեր համոզմունքն է, որ այսպիսի մի համագումար չէ կարող ժամանակակից [illegible] հիմունքների վրա դնել ազգային լուսաւորութեան գործը: Մեր այդ կարծիքը մասամբ բացատրել ենք մեր նախընթաց յօդուածում. աւելացնենք, որ առհասարակ երբէք մի հիմնարկութեան պաշտօնեաները (կոլլէգիաները) չեն կարող յեղափոխել նոյն հիմնարկութեան կազմը: Դա ունի թէ որոշ հոգեբանական հիմունքներ և թէ ուղղակի կաշուի խնդիր է:

Այդ է պատճառը, որ որոշ հիմնարկութեան, օրինակ, մի որ և է մինիստրութեան պաշտօնեաները կարող են այս կամ այն բարեփոխումն կամ վատափոխումն մտցնել մինիստրութեան մէջ, բայց երբէք հիմքից չեն յեղափոխի նրա կազմը, նրա գործունէութեան ձևը, նրա ծրագրի հիմնական կէտերը:

Նոյնը սպասելու է և գումարվելիք ժողովից, եթէ նա բաղկացած պէտք է լինի միայն յիշած երեք տարրերից, որոնք անկարող են դէն շպրտելու այն բոլոր կարգերը, որոնք տարիների ընթացքում նուաճել ու լճացած են պահել նրանց ուղեղը: Բացի այդ կայ և շահի խնդիրը, որը գուցէ չը հաշտվի յեղափոխական վերափոխումների հետ:

Մի կարևոր հարց ևս. ո՞վ է ընտրում այդ ուսուցիչներին, հոգևորականներին և հոգաբարձուներին:

Ծխերը, համայնքը, թէ ուսումնարանական կոլլեգիաները: Ուրիշ խօսքերով, հոգաբարձուները իրանց միջից մի ներկայացուցիչ պէտք է ուղարկեն և ուսուցիչները իրանց միջից մէկին կամ մի քանիսին, թէ ծուխը պէտք է մատնանիշ անի այս ինչ հոգաբարձուի կամ այս ինչ ուսուցչի վրա: Տարբերութիւնը այս երկու ձևի ընտրութիւնների մէջ այնքան մեծ է, որ հարկաւոր է այդ բանը որոշել, այլապէս կարող են այնպիսի մարդիկ ընկնել համագումար, որոնք այս կամ այն դիտումով հոգաբարձու են դառած, բայց պատրաստութիւն չունեն խօշոր դպրոցական ռեֆորմներ ծրագրելու կամ այնպիսի ուսուցիչներ, որոնք իրանց կրթութեամբ և անցեալով նոյն իսկ հակառակ կը լինեն որ և է նորութիւնների ներմուծման:

Այս և ուրիշ տեսակէտներով, (որ աւելորդ կը լինէր յիշել այստեղ), մենք միանգամայն անբաւարար ենք համարում այդպիսի մարդկանցից կազմված մի համաժողովի ձեռնահասութիւնը, կոմպետենցիան ազգային լուսաւորութեան ահագին խնդիրը լուծելու համար:

Բայց այդ չէ միայն ծրագրած համագումարի Թերութիւնը:

Ի՞նչ է ներկայացնում իրապէս այդ համագումարը. մի խումբ մարդիկ, որոնք ժողովրդի ընտրեալներ չեն: Եւ սրանք պէտք է դատեն ժողովրդի կրթական պահանջների մասին, սրանք պէտք է տնօրինեն ժողովրդի դրամով թէ իրանց վճիռը և թէ նոյն ժողովրդի մանուկներին տալիք մօտաւոր կրթութեան ձևը:

Մի տարրական միտք յայտնած կը լինէինք, եթէ կրկնէինք, որ ժողովուրդն է մեր բոլոր ազգային հիմնարկութիւնների տէրը և նա միայն իրաւունք ունի տնօրինելու իր դպրոցի վիճակը:

Մինչև այսօր ինչ-ինչ պատմական հանգամանքների շնորհիւ, դպրոցի վիճակը հոգևորականութեան ձեռն էր. Նա էր, որ ուսման ծրագիրներ էր մշակում, նա էր որ ղեկավարում էր ամբողջ լուսաւորութեան գործը:

Բայց բաւական է: Այժմ ժողովուրդը պէտք է իր հզօր ձայնը բարձրացնի: Թո՛ղ նա խօսէ ազատօրէն, յայտնէ իր կարիքները, իր ցաւերը, թո՛ղ նա ինքը իր կարիքները հոգայ և ցաւերը բուժէ: Մեզ համար ևս նոր պատմական դար է բացվում,—ժողովրդի գերիշխանութեան դարը. նա պէտք է դուրս գայ «խնամատարութեան» տակից, նա կարիք չունի մի որ և է դասակարգի «հովանաւորութեան»: Նա ինքը պէտք է իրան խնամէ և հովանաւորէ:

Այսօր Վեհափառի ազատամիտ ժողովրդասիրութիւնը բացում է մեր առաջ ժողովրդի ինքնորոշման ասպարէզի դուռը. ցաւակցաբար շատ, չափազանց նեղ է այդ դուռը, քանի որ նրանով կարող են մտնել մի քանի արտօնեալ դասակարգեր—հոգևորականութիւնը և մանկավարժական դասակարգը: Այդ բաւական չէ: Ժողովուրդը պէտք է ուղարկէ այնտեղ իր իսկական ընտրեալներին ընդհանուր, հաւասար և գաղտնի քուէարկութեամբ: Նա հաւատ չէ ընծայում և չէ էլ կարող ընծայել ոչ հոգևորական, ոչ մանկավարժական դասին, որովհետև նա դժգոհ է արդի դպրոցական կարգերից, նա միշտ բողոքել է դըպրոցի վարիչների փտասկար, երբեմն կործանարար գործողութիւնների դէմ: Այժմ այլ ևս ոչ մի դասակարգ լիազօրութիւն չունի ժողովրդի կողմից խօսելու, որովհետև ժողովուրդը բաւականաչափ հասունացած է իր կամքը յայտնելու համար: Զը մոռանանք, որ մեր ժողովուրդը շուտով կանչվելու է Ռուսաստանի միւս ազգերի հետ, դէպի ինքնորոշութեան ասպարէզ: Թո՛ղ ուրեմն այս ուսումնարանական համաժողովը առաջին փորձը դառնայ: Եւ, իսկապէս, ծիծաղելի կը լինէր, որ մենք, ինքնահաւան կուլտուրտրեգերներս, չօգտվէինք գոնէ այն իրաւունքով, որը տալիս է մեզ դպրոցական և եկեղեցական ինքնավարութիւնը:

Ահա և մի ուրիշ տեսակէտ, որը միանգամայն անբաւարար է դարձնում համագումարի ծրագրած կազմը:

Ուրեմն թէ գործի աջող ելքի և թէ ժողովրդի, դպրոցի իսկական տիրոջ, իրաւունքի տեսակէտից, ուսումնարանական համաժողովին պիտի մասնակցեն ժողովրդի ընտրեալները:

Ընտրութեան ձևը ես չեմ նախորոշում. արդար ձևը կը լինէր, ի հարկէ, ծխական ընտրութիւնները, որոնք իրանց միջից կընտրէին Թեմական ներկայացուցիչներ: Սա իդէալական ձև չէ, բայց կարելի է հաշտվել դրա հետ: Ընտրութիւնները կը լինեն ընդհանուր և գաղտնի: Կանանց ձայնը մեծ կարևորութիւն ունի, ուստի նրանք ևս պիտի մասնակցեն:

Այսպիսով համագումարը չի լինի շալօնական պրօֆեսիօնալ մարդկանց ժողով, այլ ազգի կենսական պահանջներ ճանաչող մարդկանց խորհրդակցութիւն, որոնցից ամեն մէկը իր երկրի պահանջները կանէ դպրոցից:

Թէ ինչ տեսակէտից այդ բանն անհրաժեշտ է, ցոյց կը տանք հետևեալ անգամ:

Կայ մի հարց ևս, որը չէ պարզված Վեհափառի սուած հրահանգի մէջ, այն է թէ այդ ժողովը արդեօք միայն խորհրդակցութեան ձայն պիտի ունենայ, որոշումները թողնելով հոգևոր բարձր իշխանութեանը, թէ նա պիտի մի տեսակ օրէնսդրական մարմին լինի:

Այդ մասին երկու կարծիք չէ կարող լինել. ազգի ներկայացուցիչների ժողովը պիտի որոշումներ կայացնէ և դրանց իրագործումը յանձնէ իր հսկողութեամբ կամ արդէն գոյութիւն ունեցող դպրոցական կենտրոնական վարչութեան (որը հոգևոր իշխանութիւնն է այժմ), կամ թէ մի ուրիշ գործադիր մարմին ստեղծէ, խառն հոգևորականներից ու ժողովրդի ներկայացուցիչներից:

Վ. Արծրունի

Ի՞ՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ ՇՈՒՇԵՑԻՆԵՐԸ

Ամենից առաջ պէտք է իմանանք՝ Շուշում շուշեցի կա՞յ, որ տեսնենք թէ ինչ է անում նա:

Չը կայ. Թափուր է նա: Ծօխ մէյդանի, հռչակաւոր Թոփխանի տուրբի փոխարէն այժմ այնտեղ սև փոփոխուտոր մշակներ, անգործ արհեստաւորներ և մեծերավաճառ գիւղացիներ կը տեսնէք: Շուշու գողգոթան մամռոտել է—խանի քիւրաուն՝ այն վայրը, որտեղ մեր կրեսօնները շատ բախտեր էին վճռում, շատ չար ու բարի խօսում: Մի քանի պառաւած ու անունկ ծերունիներ, պաշտօնաթող չինօվնիկներ, այրված տների տէրեր... դրա՛նք են կազմում Թոփխանի զարդը...

Գաղթեցին կրեսօնները և գաղթում է մնացորդը, տականքը: Ոչ ոք չէ խնայում Շուշուն, ոչ ոք լալկեղ չէ անում մնալ: Եւ ինչու մնայ, ինչի վրան նստի, ինչ աշխատէ, ինչ ուտէ:—Ահա յուսահատական ճիչեր, որոնք քարացնում են սրտերը, չորացնում եղած աշխատանքի աղբիւրը:

Այո, յուսահատական է, շատ յուսահատական: Մարդու արիւնը ցամաքում է երակների մէջ, տեսնելով այս աւերն ու աւերածութիւնները: Ամայութիւն, լռութիւն, մեռելութիւն, խղճուկ քարակոյտներ—ահա ինչ են ներկայացնում նայողի աչքին անցեալ տարի այս ժամանակ չէին, կանգուն կենդանի, հարուստ խանութներն ու գեղեցիկ տները: Ի՞նչ սիրտ անի մարդ այստեղ մնալու: Չը կայ մէկը նորոգող, չը կայ մէկնելը օգնող, խրախուսող. որին հարցնում ես անէծք է Թափում բերանից: Պատճառը. միթէ նա չէ սիրում իր քրփած գործը կենդանի տեսնել, իր հայրենի օջախը կանգնած:—Շատ է ուզում, սիրտը մղկտում է, բայց ինչով շինէ, ո՞ւր է փող ո՞ւր է կարողութիւն. բոլորը մոխիրի մէջ: բոլորը հողի բաժին... Ահա ինչու է անիծում: —Դա է նրա միակ զէնքը, մխիթարութիւնը— անէծք: Իսկ կարողները: Դրանք շատ աննշան են, տասը մասների վրա հազիւ համարելի, և սիրտ չեն անում աւերակների մէջ քար քարի վրա դնել, փող ծախսել: Ո՞ւր է վստահութիւն, ո՞ւր է հաւատ. միակ նա կարող է անհուն ամայութեան կենդանութիւն պարգևել: Մնում է միաձայն մի վճիռ և անառելի մի կարողութիւն, որ միահամուռ գրոհով տապալէ ժայռը, այդ հսկայ շղթան՝ արգելքը—ու ամենքն սկսեն շինել. շինեն ու վերադառնան, վերադառնան ու գործեն. իսկ իսկ այդ ամենի հզօր խրախոյս, ամուր նեցուկ կարող է լինել մի աւելի կենդանալար գործօն, որի չը լինելն այնքան տանջում է մեզ. դա երկաթուղին է: Նրա ծայրը սարեր, ձորեր, անապատներ հասաւ, ամենայետ ընկած քաղաքներ ու աւաններ տեսաւ, բայց մեր դըրախտանման Շուշին կարօտ մնաց: Դրա ամօթ ու անէծքն էլ մեր օտարաբնակ միլիօնատէրերին...:»

—

Մարդիկ վաչկատուններ են դարձել:

Հաւատը կորել է, երաշխաւորութիւնը մանրացել: Առեւտուրը դարձել է կեղեքման, խաբեբայութեան միջոց: Ապրանք կեղծելը—մանուանդ հացը, միսը, իւղը և այլն, անցնում է առանց դատապարտութեան և մտել է սովորական երևոյթների շարքը: Իրար ձեռքից պատառ են խլում: Ապառիկ անունը կորել է և կանխիկ առևտուրը դարձել է այժմեան առևտրի նշանաբանը: Ով չունի՝ ջանը դուրս գայ, դրա համար մտածող չը կայ:

Տարբեր են և դերերը:—Մշակը նաւթավաճառ է դարձել, դերձակը՝ հացթուխ, ատաղձագործը՝ մանրավաճառ, լաքեյը՝ մսագործ, կօշկակարը՝ բախկալ... և այսպէս Թոփխանայի հրապարակը բռնված է առևտրական մի ցանցով, որի մէջ աչքի ընկնող տեղ բռնում են Դաշուշէնի կանխավաճառները և պարկեհատակ մշակների ձեռին գտնվող հայ աների կամ կարասիքների ու ամենատեսակ իրերի մոնոպոլիան—սկսած ամենավերջին շամփուրից մինչև մետաքս է հագուստները, բմբուլ բարձերը և բրօնզեայ մահճակալները: Գաղթողների հարստութիւնն է այդ:

Ծախողը շատ, առնողը քիչ:

—

Շուշում երկու տարուց ի վեր գոյութիւն ունի փոխադարձ վարկի ընկերութիւն: Աֆֆերիմ, որ նա կրակի ու սրի միջից ողջ-առողջ իր գլուխն ազատեց: Իրաւ է, Շուշու աւերումը, առևտրի ընկնելը բաւականին վնասեց այդ ընկերութեան. շատերը նոյն իսկ կարծում էին, թէ նա կը կորցնէ իր գոյութիւնը և կը փակվի աղէտներից յետոյ, դրա համար էլ մի քանի մարդիկ հանեցին այդտեղից իրանց դրամագլուխը, կրեդիտը և չարագուշակ լուրեր տարածեցին, բայց շնորհիւ առկածն աշխատանքի, գիտակցութեան և մարդկանց միջամտութեան, հնարաւոր եղաւ այդ ընկերութիւնն իր տեղը պահել, համաձայնվելով նոյն իսկ փոքր վնասին, քան իսպառ փակման:

Եւ ինչ է նրա կորցրածը աւերմունքում, շատ չնչին բան, Թող լինի մի տարվայ աշխատանքը:

Շուտով այդ ընկերութեան տարեկան հաշուետւութիւնն է, որից կը պարզվի հասարակութեան առաջ թէ ինչ է նրա այս մի տարվայ վնասը:

Այդ ակտից յետոյ պէտք է կատարվի և մի դիրեկտորի ընտրութիւն: Թեկնածուների թիւն այնքան շատ է, որ պէտք է օր առաջ պատուիրել մի հարիւր քուէտուփ պատրաստելու: Թեկնածութեան ախտը վարակել է բոլորին. քանի հատ հիմնադիր-անդամ ունի ընկերութիւնը՝ մարդագլուխ այնքան թւով թեկնածուներ են երևան եկել: Ճշմարիտն ասեմ՝ մի ժամանակ իմ նախանձը ևս շարժվեց, ես էլ ուզեցի այդ ախտով վարակվել, բայց վախեցի, որ մրցման պայքարում մարդիկ իրար ծուէն ծուէն անեն և ես տակը մնամ:

—

Թեմական դպրոցի աշակերտների պահանջը խանձարուրքի մէջ մարեց: Նա երկար չը տեւեց: Աշոտ եպիսկոպոսի դիկտատօրները աւելի ճարպիկ գտնվեցան աշակերտներին գոհացում տալու վրա պնդել: Գոհացում: Մի՞թէ... Սակայն ինչ էլ որ ճնշված լինի աշակերտութեան, դա շնորհիւ տեսուչ վարդապետի բացակայութեան է:—Աշակերտների բախտն էր, որ Ներսէս վարդապետը այդ միջոցում Շուշի չէր: Այդպէս են ասում բոլորը: Եւ սխալ չեն, որովհետև... Նա վերադարձաւ և թունդ կղնվեց, որ առանց իր թոյլտւութեան աշակերտների պահանջները ընդունել են: Ուրեմն կասկած կայ, որ կարող է բանը շուտ գալ և աշակերտներին դարձեալ յետ տալ իրանց նախկին տեղը. կասկած կայ, որ վարդապետի ներկայութիւնը կարող է խլրտումն առաջացնել: Եւ այն ժամանակ յաղթանակը վեղարի կողմը կը լինի բնականաբար:

Մի՞թէ կարելի է յուսալ, որ աշակերտութեան միահամուռ ձայնով հեռացված տեսուչ վարդապետը կը հեռանայ խոհեմութեամբ՝ առանց իր ետևում խռովութեան հետքեր թողնելու: Դա կախված կը լինի միայն աշակերտների յամառ ուլտիմատումից և ապագայ հոգաբարձութիւնից, որի ընտրութեանը սպասում ենք շուտով:

Պէտք է աշխատել ուրեմն հոգաբարձութիւնը հանել «աղաների» ու «բէկերի» ձեռքից և տալ երիտասարդութեան ձեռքը: Պէտք է խղճալ աշակերտներին և ազատել նրանց հին, անպէտք, բթացնող առարկաներից և նրանց վեղարաւոր ու անվեղար ղեկավարներից:

Այդ կանէ նոր հոգաբարձութիւնը:

Այդ կանէ և ժողովուրդը:

Միայն պէտք է գիտակցաբար վերաբերվել ընտրութեան: Բոպէն թանգ է: Կռիւ է բացված յետադէմ և առաջադէմ գաղափարների մէջ: Շուտով պէտք է վճռվի մեր դպրոցների բախտը: Էջմիածնում կանոնադրութեան, ծրագրի խնդիր կայ դրած: Յաղթութիւնը նրանն է, ով շատ մարդ կը տանէ իրան հետ:

Շտապեցէք և գործեցէք:

Տ.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Զարմանալի ճակատագիր ունեցաւ մեր երկրի սահմանադրութեան ծրագիրը. քանի՜ քանի տեսակներով նա երևան եկաւ և որչափ փոփոխութիւնների ենթարկվեց: Ինչպէս յայտնի է, այդ ծրագրի առաջին ձևը, որ մշակված էր Բուլիգինի մինիստրութեան օրով, լոյս տեսաւ անցեալ օգոստոսի 6-ին: Բայց որովհետև այդ ծրագիրը ոչ ոքի բաւարարութիւն չը տվեց և ահագին շարժումներ առաջ եկան, ուստի նա մի քանի բարեփոխումների ենթարկվեց և երկրորդ անգամ նորից լոյս տեսաւ հոկտեմբերի 17-ին, յայտնի և հռչակաւոր մանիֆեստով:

Իսկ երբ ժամանակները փոխվեցին և բիւրօկրատական միապետութիւնը նորից իր ոյժերը հաւաքեց, նա սկսեց մաս առ մաս այդ ծրագիրը նորից փոփոխութիւնների ենթարկել, ձգտելով միշտ վերականգնել օգոստոսի 6-ի օրէնքները: Այս վերջին փոփոխութիւնների մէջ ամենաաչքի ընկնող կէտերից մէկն էլ մինիստրութեան պատասխանատւութեան հարցն է: Ինչպէս յայտնի է, Բուլիգինի մշակած օրէնքի համաձայն, Դումայի 30 անդամների ինիցիատիւով միայն կարելի էր մինիստրութեանը այս կամ այն խնդրի մասին հարցապնդում անել և մինիստրութեանն էլ իրաւունք էր տրվում այդ հարցապնդումներին բոլորովին չը պատասխանել: Իսկ այն դէպքում, երբ Պետական Դուման չը գոհանար մինիստրութեան տուած բացատրութիւններով, նրա անդամների 2/3 մասի որոշմամբ միայն, նա կարող էր իր կարծիքը բարձրագոյն բարեհայեցողութեան ներկայացնել Պետական խորհրդի նախագահի միջոցով: Այդպիսով այս կամ այն խնդրի յետագայ ընթացքը կախված պիտի լինէր բարձրագոյն իշխանութեան հայեցողութիւնից, իսկ մինիստրութեան պատասխանատւութիւնն էլ ենթարկվում էր պետական խորհրդին, այսինքն այն մարմնին, որի բոլոր անդամները նշանակվում են նոյն բարձրագոյն իշխանութիւնից:

Այդպէս էր, ասում ենք, օգոստոսի 6-ի օրէնքը, որը ամենամեծ դժգոհութիւնների առիթ տուեց և կառավարութիւնը ստիպված եղաւ այդ օրէնքը հիմնական փոփոխութիւնների ենթարկել և մինիստրութեան կատարեալ պատասխանատւութիւնը խոստանալ, իրաւունք տալով Դումայի ամեն մի անդամին իր ցանկացած հարցի մասին հարցապնդում անել և պատասխան ստանալ մինիստրութիւնից: Իսկապէս հէնց այդ է պարլամենտական ճիշտ օրէնքը և այդպէս են վարվում բոլոր սահմանադրական երկրներում: Սակայն մի քանի կարծեցեալ յաղթութիւններից յետոյ, Վիտտէ-Դուրնովոյի ախորժակը սաստիկ գրգռվեց և նրանք, ինչպէս վերևում ասացինք, սկսեցին հոկտեմբեր 17-ի օրէնքները ոչխարի բուրդի նման մաս առ մաս խուզել և կրկին վերադառնալ օգոստոս 6-ի օրէնքներին:

Այդ խուզումների մի նմուշն էլ փետրվար 20-ին հրատարակած օրէնքն է, որը գլխաւորապէս վերաբերում է մինիստրական պատասխանատւութեան խնդրին և կէտ առ կէտ հաստատում է բոլոր վերոգրեալ բուլիգինեան օրէնքները:

Այս զարմանալի ճակատագիր ունի մեր երկրի սահմանադրութիւնը, համարեա թէ ամեն ամիս նա կերպարանափոխութիւնների է ենթարկվում, զանազան փազիսներ է անցնում, բայց և, ինչպէս կախարդական շրջանակի մէջ, դարձեալ իր մեկնման կէտին է վերադառնում. միթէ այլ կերպ էլ կարող է լինել, քանի որ սահմանադրութիւն մշակողը նոյն բիւրօկրատական կազմը կը լինի և ոչ թէ ժողովրդի լիազօր ներկայացուցիչները:

Խ—Ա.

ՆԱՄԱԿ ՂԱՐԱՍՈՒԲԱԶԱՐԻՑ

Մարտի 5-ին

Վերջապէս մի անգամ ևս դէպք եղաւ ինձ այս ձմեռվայ կիսին այցելել Ղրիմի նախկին տիրապետողներից Բիւյուկ-Սառաբոլ կոչված հռչակաւոր Ղարասուբազարը, որ այժմ նաև Ղարասուփարիժ է անուանվում: Սա մի քաղաք է, որ ճարտարապետական ձևերով ու դիրքով միակն է գուցէ և ամբողջ Ռուսաստանում, որպէս բուն ասիական մի քաղաք:

Ղարասու—որ նշանակում է սև ջուր: Սակայն ընթերցողը չը շփոթի և խօսքը յանկարծ բառացի չը հասկանայ. քաղաքում սև ջուր չը կայ. կայ մի դանդաղավազ ջրի գոյն գետակ, որ անցնելով քաղաքի միջով կազմում է թէ վերջինիս զարդը և թէ սիրտը ամենայն վարակումների: Սև բառը Ղարասուբազարի վերաբերմամբ պէտք է չափազանց առաձգական համարել, գլխաւորապէս նրա ներքին հասարակական կեանքի տեսակէտից և մանաւանդ մեր հայ թէ լուսաւորչական և թէ կաթօլիկ աղաների նկատմամբ, որոնց ներքին ու արտաքին, հասարակական ու անհատական կեանքի վրա իրաւամբ կարելի է եթէ ոչ սև (դա խիստ կը լինի) գոնէ մութ բառը դրոշմել—Ղարասուփարիժի այս պատմական մեղմացրած խորհրդանշանով բնորոշել...

Եթէ չեմ սխալվում թւերի մէջ, մօտաւորապէս 150 տուն հայերից մի երրորդ մասը կազմում են լուսաւորչականները: Ազգակից եղբայրները պատմականօրէն տակաւին կրօնական անտագօնիզմի վերջին փազերի շրջաններումն են. ինչ արած, իներցիայի օրէնք է դա... Այստեղ լուսաւորչականի համար հայ կաթօլիկը դեռ «պոչը կտրած» է համարվում, իսկ հայ կաթօլիկի համար առաջինը—«պոչով»... Սրանք երկու առանձին համայնքներ են կազմում իրանց զատ եկեղեցիներով ու ծխական դպրոցներով: Սակայն անհրաժեշտ է խոստովանել, որ հայ կաթօլիկ համայնքը մի աստիճանով աւելի բարեկիրթ վիճակի մէջ է, քան միւսը: Հարկաւ, աղա դասակարգը ամեն տեղ էլ, ամեն համայնքի մէջ էլ մարդկային մի և նոյն որակութիւններով է օժտված, նրա բարոյական տիպարը ամեն տեղ էլ նոյնն է, սակայն մեր լուսաւորչական արտօնեալ աղաների թիւը Ղարասուբազարում ըստ երևոյթին աւելի պէտք է լինի, որովհետև մեր հասարակական գործերը նրանց ձեռքում աւելի թեթև կերպով են խաղալիք դառնում:

Եկեղեցի ու դպրոց—արտօնեալ, տոհմակից աղաների սեփականութիւնն են այնպէս, ինչպէս բաղնիսը իր տիրոջ ձեռքում: Քահանայ, ուսուցիչ—աղայի աչքում արտօնեալների նոյն ծառաներն են, ինչ որ բաղնիսպանը իր տիրոջ աչքում: Սրանք թէպէտ կոպիտ համեմատութիւններ են, ընթերցող, սակայն դառն իրականութիւն: Ուրանալ սա ոչ ոք չէ կարող. մենք բազմաթիւ փաստեր կարող ենք բերել:

Արտօնեալ աղան կարող է անբարոյական, թղթամոլ, անճարներին շահագործող ու վերջին ծայր ագէտ լինել. այդ ոչինչ, եթէ նա աղա է, ըստ սորկամիտ ժողովրդի՝ ուրեմն և արտօնեալ, ամենակարող, ամենապատուելի. նա և՛ հոգաբարձու է, և՛ երեցփոխ, և՛ ամեն բան. Նրա համար խղճի ձայն իբրապէս գոյութիւն չունի, ամեն ինչ կոպիտ եսասիրութեամբ պէտք է կատարվի, այլա լէս նրա ցասման ու բարկութեան աստիճանը ոչ մի ջերմաչափով չէ կարելի որոշել: Որքան կուզէք յիշեցրէք խղճի օրէնքներ, արդարութիւն, մարդավարութեան տարրական օրէնքներ.

—Մենք ալ քիչ մը փաստաբանութիւնէն կը հասկնանք, ծօ, մենք ալ Սաղմոս ու Պղնձէ քաղաք կարդացեր ենք... մենք ցեղով փաստաբաններ ենք,—կը պօռայ ձեր երեսին մեծապատիւ աղան:

—Այօ, աղաներ, դուք ցեղով այդպէս էք... «փաստաբաններ» էք, ես ոչինչ չունեմ դրա դէմ,—կը պատասխանեմ ես:

Եւ այդ տիպիկ աղաներից կազմված ներկայ հոգաբարձութեան (բացառութեամբ մի երկուսի) բարոյական ֆիզիօնոմիան պարզելու համար անշուշտ մի խոշոր փաստ է հետևեալ բնորոշ պատմութիւնը:

Ծխական դպրոցի համար ուսումնական տարվայ սկզբում հարկաւոր է լինում մի ուսուցիչ: Բաղդի բերմամբ գտնվում է կեանքի մէջ մի անփորձ, տակաւին վառ երիտասարդական գաղափարներով տոգորված մի ուսուցիչ. օգտվելով ի միջի այլոց նրա նիւթական սղութիւնից, վերոյիշեալ հոգաբարձութիւնը ճարպիկութեամբ կարողանում է այդ երիտասարդի հետ պայման կապել 400 րուբլի տարեվարձով և դնել նրա վրա հետևեալ ծանր պարտաւորութիւնները.

1) Դպրոցի ուսուցչութիւնը, 2) Կրօնուսոյցի պաշտօնը, 3) Եկեղեցու խմբապետութիւնը և 4) Դրագարանում՝ գրադարանապետութիւնը: Լաւ չեմ յիշում, ժամկոչութեան պաշտօնն էլ ուսուցչին առաջարկված է եղել թէ ոչ... Սա մի պայման է, որին կարող էր համաձայնվել միայն կեանքի մէջ անփորձ կամ նիւթականից բոլորովին զրկված մարդը: Չէ՞ որ դրված պարտաւորութիւնները կատարելու համար պէտք էր առնուազն երկու մարդ, հետևաբար և ոչ թէ 400, այլ նրա կրկնապատիկը պէտք է վճարվէր: Սակայն չարչի հոգաբարձութիւնը ընդունակ է ամեն տեսակ սպեկուլյացիաների, նա հէնց սնված է ու մեծացած իր նուիրական չարչիխանայում և այդ պրիզմայից էլ նայում է ամեն մի հարցի վրա: Ծախագործելը—նրա սրբութիւն սրբոցն է. և օգտվելով հանգամանքից, 200 րուբլով ուսուցիչ է վարձում (200 էլ խմբապետութեան առնուազն), մինչդեռ ուսուցչի նախորդները միշտ 500 են ստացել...

Ամօթ ձեզ, հազար ամօթ... Հապա ո՞ւր է արդարութեան զէթ ուրուականը, կա՞յ խղճի խայթ, պ. պ. հոգաբարձուներ, պատասխանեցէք: Չէ՞ որ դուք ցեղով «փաստաբաններ» էք...

Մի այլ առակ ևս լուարուք. դա վերոյիշեալ պատմութեան շարունակութիւնն է:

Ամբողջ 3—4 ամիս պաշտօնավարութիւնից յետոյ, բարդ ու ծանր պարտաւորութիւնների տակ ճնշված, ուսուցիչը համարձակվում է մի խնդիր ներկայացնել աղա-հոգաբարձուներին, որ իր ռոճիկը գոնէ 100 րուբլով աւելացնեն, քանի որ իր նախորդները միշտ այդքան ստացել են, այն էլ միայն ուսուցչութեան համար: Ընտրեալ, անձեռնմխելի աղաների տեսակէտից անշուշտ մի յանդգնութիւն, մի յանցանք է սա, սակայն այնուամենայնիւ մի ժողով գումարվում է այդ հարցի առիթով և մեծապատիւ պարոնների անզուգական մեծահոգութեան արդասիքը լինում է այն, որ որոշում են տարվայ վերջին 25 րուբլի վարձատրութիւն տալ ուսուցչին, ի նկատի ունենալով նրա եռանդը, և այլն: Քսան և հինգ րուբլի... այ էսկիմօսներ, սա ոչ վարձատրութիւն չէ, սա ծաղր է, մի վիրաւորական ողորմութիւն... Ժողովի ձայնակիցներից մի-երկուսը թէպէտ փորձում են բողոքել, ամօթ ու անպատուաբեր են համարում այդ խաղը, սակայն նրանց բողոքը մնում է ձայն բարբառոյ յանապատի...

Եւ ուսուցիչը ազնուաբար մերժում է այդ ողորմութիւնը, չընդունելով 25 րուբլին:

Ահա, համբերատար ընթերցող, Ղարասուփարիժ կոչվող քաղաքի մեր աղա-հոգաբարձուների բարոյական ամբողջ պատկերը. մի դասակարգ, որ ապականել ու նեխել է մեր հասարակական կեանքի մթնոլորտը:

Ժամանակ է վերջապէս թօթափել հնութեան փոշին ու հասարակական ասպարէզից դէն շպրտել ժողովրդի այս պարազիտներին:

Սուրխաթեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 7-ին

Պ. Հայկ Տէր-Աստուածատրեանցի «օրգան» «Դիտակ»-ի № 2-ում տպված է մի լուր, ուր լրատուն անբարեխիղճ կերպով փաստերն աղաւաղել է, որպէս զի ցոյց տայ թէ մենք դժգոհ ենք պ. Մալխասեանի դասաւանդութեան ձևից, որին լրատուն «խալիֆայական» է անուանել: Սակայն իրողութիւնը այս է, որ աշակերտները դժգոհ են ոչ թէ պ. Մալխասեանի դասաւանդութեան ձևից, այլ դժգոհ են առարկաներից և պահանջում են, որ գրաբարի հին մատենագրութեան հետ զուգընթացաբար անցնենք նաև աշխարհաբար և նոր գրականութիւն:

Ուրեմն այստեղ պ. Մալխասեանի մեթօդը մեղաւոր չէ, որը կարելի է եզրակացնել հէնց նրանից, որ աշակերտները դէմ չեն, որ եթէ մի գեղեցիկ օր աշխարհաբար մտցնեն, դարձեալ դաս տայ պ. Մալխասեանը: Իսկ նոր գրականութիւնը, թէպէտև պաշտօնապէս ընդունված չէ դպրոցում, բայց պ. Մալխասեանը սկսել է կիրակի և տօն օրերին VI-րդներին համար դասախօսել:

Նոյն համարում տպված է, որ պ. Մալխասեանը մեզ «լըբիր է» անուանել և սակ, «ռադ էլէք տեղներդ» այդ ևս զրպարտութիւն է.

Դրանով չը բաւականանալով, պ. Հ. Տէր-Աստուածատրեանը իր թերթի № 3-ում զետեղել է մի մենախօսութիւն (արժանի Շէկսպիրի գրչին): Այդտեղ ասված է, որ եթէ «Դիտակ»-ի հրատարակողը ուսուցիչ լինէր մեր դպրոցում, պ. Մալխասեանը նրան ցոյց կը տար:

Պ. Տէր-Աստուածատրեան, երևի շատ կը ցանկայիք ուսուցիչ լինել Ն. դպրոցում և երևի կը լինէիք նոյնքան հանճարեղ ուսուցիչ, ինչպէս և հանճարեղ խմբագիր էք: Բայց Ն. դպրոցի ուսուցչութիւնը ձեզանից նոյնքան հեռու է, որքան ագուէսի դունչը ընկոյզից:

Ինչպէս երևում է, պ. Տ-Աստուածատրեանը իր թերթը հէնց այդ նպատակով է հիմնել, որ անուանարկէ պ. Մալխասեանցին: Այդ երևում է նոյն № 3-ի «քրոնիկոնի» բաժնում տպած լուրից, երբ թէ պ. Մալխասեանը ստորագրութիւն է հաւաքում, որպէս զի մի ուսուցչի դուրս անէ: Դա արդէն պոչաւոր սուտ է և անբարեխիղճ զրպարտութիւն:

Այդ ուսուցչից գանգատվել են աշակերտները՝ աշակերտների հետ նրա անտանելի վարմունքի համար, ստորագրութիւն ոչ թէ պ. Մալխասեանն է հաւաքում, այլ մենք, որ ձեռներիս փաստեր ունենանք մեր ասածը ապացուցանելու (այդ ուսուցիչը դասաւանդող է միայն պատրաստականներում): Բացի այդ, պ. Տէր-Աստուածատրեանը չէ հասկանում, որ աշակերտութիւնը բողոքում է ոչ թէ այս կամ այն ուսուցչի դէմ (դա ժամանակաւոր բան է) այլ դպրոցական փտած ու մեռցնող ծրագրի և կարգերի դէմ: Նա այնքան ժլատ գտնվեց, որ իր հեղինակաւոր ձայնը չը բարձրացրեց յօգուտ ճեմարանցիների և Երևանի թեմականի աշակերտների և դեռ նրանց անուանեց խաղալիք ուրիշների ձեռքին, իսկ մեր դպրոցում պատահած մի հասարակ դէպք մահանայ բռնում ու մասխարութիւններ անում և դրանով մեզ «արջի ծառայութիւն մատուցանում»:

Սակայն ինչպէս մեր ճեմարանի ու Երևանի թեմականի ընկերները կարիք չունեցան պ. Տ-Աստուածատրեանի «հեղինակաւոր ձայնին» (sic), այնպէս էլ մենք կարիք չունենք և խնդրում ենք «ջաֆայ» չը քաշէ մեր մասին հոգալու:

Ներսիսեան դպ. VI-րդ դաս. աշակերտներ

—

Ղօշավանք գիւղ, մարտի 1-ին

Գիւղիս հոգաբարձութիւնը ի նկատի ունենալով ընթերցող հասարակութեանը յայտնի Հոռոմոս վանքի աննախանձելի վիճակը, և տխրահռչակ «պաշտպան» հանդիսացող առամեալ Ստեփան վարդապետ Շիրակունու անտարբերութիւնը, (որի շնորհիւ շարունակ գիւղիս հասարակութեան հասցէին բարդվում են ի միջի այլոց մեղադրանքներ ու նախատինքներ պ. պ. այցելուների կողմից, վերջիններս վերագրելով ամեն բան հասարակութեանս անտարբերութեանը) մօտ օրերս խնդրամատոյց է եղել հոգևոր կառավարութեանը և պահանջել, որ անյապաղ հեռացնեն յիշեալ ծերունուն, կամ մի նոր մասնագէտ ու կարեկից վարդապետ ուղարկեն այստեղ, և կամ ամբողջովին իրաւունքը վանքի յանձնել հոգաբարձութեան իշխանութեանը և վերջինիս վրա նշանակել մի հսկիչ: Հոգաբարձութիւնը մտադիր է նաև մի այդպիսի խնդիր էլ դնել Վեհափառ Կաթողիկոսի տրամադրութեան տակ, դարձեալ նոյն նպատակին վերաբերեալ ու կարևոր պահանջներով:

Յուսով ենք, որ հոգաբարձութեան արդար ճանաչված այդ պահանջները չեն մնայ «ձայն բարբառոյ յանապատի» և յիշեալ վանքը գոնէ կունենայ իր մասնաւոր լաւ ընթացքը և կազատվի իր օրհասական թշուառ ու խարխուլ դրութիւնից:

Ի դիմաց նոր գրադարանի՝
Յովհաննէս Յարութիւնեան

—

Թիֆլիս, մարտի 22-ին

Մեր վաղամեռիկ պաշտօնակից և սիրելի ընկերոջ՝ Լևոն Ա. Գէորգեանցի անմոռաց յիշատակը յարգելու համար, «Եղբ. Մ. Խ. և Ա. Գէորգեանցը» առևտրական տան գործակատարներս մտադիր էինք պսակ գնելու հանգուցեալի դագաղի վրա, բայց աչքի առաջ ունենալով մեր ժողովրդի ներկայ աւելի մեծ կարիքները, պսակին յատկացրված գումարից քսանհինգ րուբլին (25) յանձնում ենք խմբագրութեանդ, և խնդրում ենք գործադրել վերջին արկածներից վնասված մեր դժբաղդ քոյրերի և եղբայրների օգտին, իսկ մնացորդ գումարը ուղարկելու ենք Քաղաքիկ գիւղի ուսումնարանին:

Իսկ թէ մեր Լևոնի բարեկամների ու ծանօթների շրջանում գտնվեն մարդիկ, որոնք կամենան նոյնպէս նուիրատւութիւն անել մի և նոյն առիթով ու նպատակով. այդպիսիներին խնդրում եմ դիմել ինձ հետևեալ հասցեով՝ Армянскій базаръ д. Манташева, контора бр. Кеворковыхъ.

Նուիրատուների ցուցակը կը ներկայացնեմ խմբագրութեանդ:

Պետրոս Պետրոսեան

—

Մարտի 23-ին

«Մշակի» 62 համարի ոստիկանական բաժնում հաղորդված էր երիտասարդ Արշակ Զախարբէկեանցի կորստեան մասին, որը տեղի է ունեցել քաղաքիս վեցերորդ քաղաքամասում, Թուրքական Շէյթանբազար կոչված թաղում, ուր գնացել էր երիտասարդը «լուլա քաբաբ» գնելու: Որովհետև այս կորուստը ոչ առաջինը և ոչ էլ վերջինն է լինելու, ուստի հարկաւոր ենք համարում զգուշացնել հասարակութիւնը Թուրքական ճաշարանները, քեբաբչիխանաները գնալ: Այդ ճաշարաններում վխտում են Թուրք սրիկաներ, որոնք, ինչպէս երևում է, զբաղված են մարդկանց որսալով և անհետացնելով: Այս բանին առիթ է տալիս կասկածելու հետևեալ դէպքը:

Մի քանի օր առաջ մի երիտասարդ, գնալով այդ ճաշարաններից մէկը, պահանջում է լուլա քեաբաբ: Մինչդեռ նա սպասում էր պատուէրին, այդ ժամանակ սենեակի շեմքում երևում է մի յաղթանդամ Թուրք: Մի քանի րոպէից յետոյ սենեակի լաբիրինթոսից, կողքի դռներից սկսում են միմեանց ետևից երևալ նոյնպէս 2—3 կտրիճներ: Երիտասարդին պաշարում է երկիւղ և նա սրանից գուշակելով Թուրքերի չար դիտաւորութիւնը, մի ակնթարթում դուրս է վազում փողոց թողնելով գլխարկը սեղանի վրա: Ճաշարանի տէրը և ծառայողները երիտասարդի ետևից բղաւում և կանչում են նրա այդպիսի անակնկալ դուրս վազելու համար, սակայն նա պատճառաբանելով, որ ծանօթի համար է վազում, թողնում հեռանում է վտանգաւոր տեղից և միայն հետևեալ օրը ցերեկով է գալիս գլխարկի ետևից:

Բացի այս տեսակ տեղեր յաճախելուց, մենք խորհուրդ չէինք տալ նոյնպէս Թուրքական խուլ փողոցներով անցնել և նմանապէս հաւատալ նրանց և մտնել նրանց բնակարանը կամ քարվանսարաները, երբ թէ ծախելու բան ունեն ցոյց տալու:

Ա.

—

Թիֆլիս, մարտի 23-ին

«Մշակի» № 61-ի մէջ, «Ոստիկանական տեղեկութիւններ» բաժնում, տպված էր, որ իբր թէ ժամանակաւոր գեներալ-նահանգապետի հրամանով փակված է Մկրտում Փարաջանեանցի խանութը, որովհետև այդ խանութի մէջ է գտնվել սպանված կօզակի դիակը: Խնդրում եմ ուղղել այդ սխալը: Կօզակի դիակը իմ խանութի մէջ չէ գտնվել, այլ մի քանի սաժէն հեռաւորութեան վրա իմ խանութից: Գործը յանձնված է քննիչին: Գեներալ-նահանգապետը հրամայել է փակել իմ խանութը, որովհետև այդ փողոցում գինեվաճառ միայն ես եմ, և այդ պատճառով էլ միայն իմ խանութն է փակվել. եթէ ուրիշ գինեվաճառներ լինէին, նրանցն էլ կը փակվէր: Սպասվում է գեներալ-նահանգապետի կարգադրութիւնը, խանութը բանալու մասին:

Մկրտում Փարաջանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գանձակի նահանգում հայ-Թուրքական զինված ընդհարումներին ու աւազակութիւններին վերջ տալու նպատակով յատկապէս կազմված անկախ զօրախումբը, գեներալ Գօլօշչապովի ղեկավարութեամբ, կատարելով իր վրա դրած պարտականութիւնները, այժմ կազմալուծված է: Յիշեալ զօրախմբի մէջ մտնող զօրքերը ներկայումս ենթարկվում են Գանձակի ժամանակաւոր գեներալ-նահանգապետին:

—

Ոստիկանապետի պաշտօնակատարը ուղարկեց պրիստաւներին շրջաբերական հրամանագրութիւն, որով պահանջում է յայտնել Թիֆլիս քաղաքի բնակիչներին, որ «Тифлисскій Листокъ» լրագրի № 64-ի մէջ տպած նկատողութիւնը, որը արտատպված է նաև ուրիշ լրագիրներում, որ իբր թէ մարտի 25-ին ստահայրենասէրների ցոյց է լինելու, բոլորովին սուտ է, որովհետև Թիֆլիս քաղաքի, Թիֆլիսի և Բորչալուի գաւառների ժամանակաւոր գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ ոչ մի ցոյց չէ կարող տեղի ունենալ և անմիջապէս կը ճնշվի զինուորների ոյժով: Ոստիկանապետի պաշտօնակատարը պատուիրում է պրիստաւներին խիստ հսկողութիւն ունենալ, որպէս զի ոչ մի ցոյց թոյլ չը տրվի:

—

Գանձակի հայ աղէտեալների օգտին մարտի 23-ին, Թիֆլիսի ժողովարանում կազմակերպված դրամատիքական-երաժշտական երեկոյթը վիճակախաղով անցաւ մեծ աջողութեամբ: Հասարակութիւնը շտապել էր խուռն բազմութեամբ ներկայ լինել այդ երեկոյեան, իսկ երեկոյթը սարքողները ամեն ջանք գործ էին դրել նրան փայլ և աջողութիւն տալու: Պ. Մայիլեանի ղեկավարութեամբ նուագող հայ նուագածուները ազգային զանազան եղանակների նուագմամբ թասի և ասիական այլ գործիքների վրա ծափահարութիւնների արժանացան: Յատկապէս երեկոյթի այդ մասը տեսնելու եկել էր և Թիֆլիսի պ. նահանգապետ բարոն Րաուշը իր ամուսնու հետ: Երեկոյթի սկզբում խաղացած վօդևիլը, որին մասնակցում էին տ. տ. Մայսուրեան, Աբեխողովեան և պ. պ. Պետրոսեան ու Սարեան, շատ աջող անցաւ և մանաւանդ տիկին Մայսուրեան մեծ շնորհքով կատարեց իր դերը: Երաժշտական-գրական բաժնում պ. Բոշյեն երգեց մեծ հմտութեամբ, իսկ պ. Ս. Քափանակեան և տ. Մայսուրեան իրանց գեղեցիկ ընթերցանութեամբ և դեկլամացիայով շատ նպաստեցին երեկոյթի աջողութեան: Նկամոր կողմից ևս երեկոյթը կատարեալ աջողութիւն ունեցաւ:

—

Վաղը, կիրակի, մարտի 26-ին, ցերեկը Ա. Քալանթար կը կարդայ հայերէն լեզուով մի դասախօսութիւն Հաւլաբարի թատրոնում Պետական Դումայի ընտրութիւնների մասին: Դասախօսութեան նիւթը կը լինի՝ քաղաքացու իրաւունքը, ծրագիրների և պլատֆորմների որոշելը, նախընտրական ագիտացիայի նշանակութիւնը և Կովկասեան ընտրութիւնները:

—

Ինչպէս մեր ընթերցողներին յայտնի է. Թիֆլիսի գեներալ նահանգապետը սպառնացել էր «Ցնոբիս Փուրցելի» լրագրին՝ փակել, եթէ նա եօթ օրվայ ընթացքում փաստերով չապացուցանէր այն մեղադրանքը, որ նա բարդում էր զօրքի վրա, նրանց կատարած վայրագութիւնների մասին Վրաստանում: Վրաց թերթը, որին տրված պայմանաժամը լրանում էր երէկ, իր երէկվայ համարը նուիրել է, գրեթէ ծայրից ծայր, զօրքերի գործած անգթութիւններին: Առաջ են բերված փաստեր նոյն իսկ պաշտօնական աղբիւրներից, օրինակ Քութայիսի ոստիկանապետի զեկուցագրերը նահանգապետին, Շորապանի, Սենակի և այլ գաւառների գլխաւորների տեղեկագրերը դարձեալ Քութայիսի նահանգապետին, ինչպէս և ցուցմունքներ մասնաւոր վնասված անձերի: Լրագրի ընթերցումը վերին աստիճանի ճնշող տպաւորութիւն է թողնում: Խմբագիրը աւելացնում է սակայն, որ տրված ժամանակամիջոցի սղութիւնը, ինչպէս ուրիշ այլ և այլ արգելքներ, թոյլ չը տւին նրան աւելի մեծ թւով փաստեր առաջ բերելու: Նա ցանկանում է նոյն իսկ, որ նահանգապետը դատի հրաւիրէր, որպէսզի դատարանի առաջ վկաների ցուցմունքով նա հաստատէ Վրաստանում կատարված ոճրագործութիւնը և յայտնագործվին իսկական յանցաւորները:

—

Մեզ հաղորդում են Իգդիրից, որ այն տեղի ինտելիգենտ երիտասարդների շրջանում միտք է յղացել գիւղական թերթ հրատարակելու: Բացի դրանից, այնտեղ արդէն հիմնվել ու սկսել է իր գործունէութիւնը մանր վարկի փոխատու ընկերութիւն (գիւղական բանկ):

—

Ինչպէս լսում ենք «Արարատ» պաշտօնական, կրօնական ամսաթերթը դադարեցրել է իր հրատարակութիւնը: Առ այժմ պատճառը յայտնի չէ:

—

Մարտի 23-ին գիշերվայ մօտ 11 ժամին Թիֆլիսի կայարանում, մարդատար գնացքի մեկնելու ժամանակ, մի անյայտ չարագործ ատրճանակի հարուածով ծանր կերպով վիրաւորեց ստրաժնիկ Բէլօուսովին և անյայտացաւ: Վիրաւորվածին տարան երկաթուղու հիւանդանոցը, ուր և վախճանվեց:

—

Քաղաքային վարչութեան հետ ունեցած պայմանի համաձայն, ակցիոներական ընկերութիւնը պարտաւոր էր մարտի 1-ից բանալ ֆունիկուլյորի երթևեկութիւնը, մինչդեռ մինչև այժմս էլ նա չէ սկսում: Այդ պատճառով վարչութեան շինարարական մասի կառավարիչ Ա. Խատիսեանը առաջարկեց ընկերութեանը բացատրութիւն ներկայացնել: Եթէ պատճառաբանութիւնը անհիմն լինի, պայմանի համաձայն, ընկերութիւնը պիտի ենթարկվի տուգանքի:

—

Կովկասեան հանքային ջրերի տեսուչ է նշանակվում, «Кавк.» թերթի ասելով, Թիֆլիսի արքունական թատրոնի տեսուչ գեներալ-մայոր Նրոֆեցէվը:

—

Ոճրագործութիւնը շարունակվում է քաղաքումս ամեն օր: Մարտի 23-ին, երեկոյեան ժամի 8-ին, ծանր վէրք է ստացել խենջալով Թիֆլիսցիներին լաւ յայտնի Նիկողայոս Ստեփանովը, որը գինու և օղու մեծ առևտուր ունի շատ վաղուց Թիֆլիսում և յայտնի է «չիրաղ Նիկօ» անունով: Գլխաւոր պահեստը օղու և գինու գտնվում է Հաւլաբարի շիրաջխանայի զառիվայրի մէջտեղումը: Փակելով իր խանութը, նա ոտով իջնում է ցած, որ նստէ Սաղի էլէքտրաքարշը և վերադառնայ ըստ սովորութեան տուն. հէնց որ մի 6—7 սաժէն հեռանում է իր խանութից, մի անյայտ անձն խենջալը խրում է որովայնի վերևի մասում և ինքը փախչում է, թողնելով խենջալը մարմնի մասում ցցած: Վիրաւորված Ստեփանովը հառաչելով օգնութիւն է կանչում. հարևան մի գինեվաճառ տանում է իր խանութը և այնուհետև կառք նստեցնելով բերում է Միքայէլեան հիւանդանոցը բժշկական օգնութիւն հասցնելու: Պ. Ստեփանովը շատ զաւակների, (որոնց մէջ կան համալսարան աւարտած) հայր է և չը նայելով, որ 66 տարեկանից անց է—առոյգ և գործունեայ մարդ էր: Արդէն երէկ երեկոյ թշուառը վախճանվել է:

—

Մարտի 22-ին, երեկոյեան ժամի $8^1/_2$-ին, քաղաքիս Բազեզմայա փողոցում (8-րդ քաղաքամաս) մի յանդուգն գողութիւն է կատարվել այդտեղ գտնվող Ամիրաղեանի կար ու ձևի ուսումնարանից: Անյայտ գողերը՝ օգտվելով կենողների բացակայութիւնից, կոտրել են գլխաւոր մուտքի դուռը և ներս մտնելով ուսումնարանը՝ բոլոր կարի մեքենաները, գործերը, ձեռագործները և այլ պարագաները հաւաքել են և անհետացել: Այդ ուսումնարանը քաղաքիս ամենաբանուկ փողոցների վրա է և գողութեան ժամին մեծ շարժողութիւն է եղել թէ հետիոտն գնացողների և թէ էլէքտրաքարշի և այլ կառքերի: Ո՞րտեղ է դռնապանների հսկողութիւնը:

—

Ամսիս 18-ին անյայտ չարագործները մտնելով եղբայրներ Մելիք Մարութեանցի խանութը՝ որը գտնվում է Սիոնի փողոցում, և կոտրելով երկաթէ սնդուկը, տանում են այնտեղից մօտ 1165 րուբլու կանխիկ դրամ և մի քանի հատ էլ մետաքսէ թաշկինակներ: Չարագործները ներս են մտել հարևան դատարկ խանութից, ծակելով պատը: Չարագործները ձերբակալված չեն: Կասկածվում են մի քանի պարոններ, որոնք դէպքից մի քանի օր առաջ եկել էին դատարկ խանութը նայելու, որի բանալիները գտնվում են եղել պ. Մելիք-Մարութեանցների մօտ: Պահապանը ծեր մարդ է եղել և հարբած: Նա հեռացրված է պաշտօնից և կասկածվում է մասնակցութեան մէջ:

—

Ամսիս 23-ին լոյս 24-ը անյայտ չարագործները կողոպտել են Կարապետ Յովսէփեանցի չթեղէնի խանութը և տարել են մօտ 2000 րուբլու ապրանք: Չարագործները ներս են մտել հարևան դատարկ խանութներից, ծակելով պատը: Զարմանալին այն է, որ դրսի պահապանը մօտ լինելով չէ իմացել եղելութիւնը: Խանութը գտնվում է Շաղինեանի հին քարվանսարայում:

—

Մեզ հաղորդում են, որ Նօվօ-Սենակի բանտերը բոլորովին լիքն են բանտարկեալներով: Մօտ օրերս այնտեղի բանտից փախել են բանտարկվածներ՝ Կաչիբայա և Սուխիլիա: Ստարօ-Սենակիում բանտարկված է Դիմուրիա:

—

Թիֆլիսի կենտրոնական պօստ-հեռագրատան կառավարիչը մեզ խնդրում է յայտնել ի գիտութիւն հասարակութեան, որ յիշեալ գրասենեակում նախկին տարիների նման, պօստ-հեռագրական գլխաւոր վարչութեան կառավարչի թոյլտւութեամբ մարտի 27-ից, երկուշաբթի օրվանից, Զատկվայ տօների առթիւ բացվում է հեռագրական շնորհաւորութիւնների ընդունելութիւնը: Այդ հեռագիրները հերթով ուղարկվելով ըստ հասցէի, կը յանձնվին տէրերին ապրիլի 2-ին առաւօտեան ժամի 8-ին: Այդպիսի հեռագիրների վրա անհրաժեշտ է մակագրել «Поздравительная» և կամ «Пасхальная», որոնք չեն մտնիլ բառերի հաշւի մէջ:

—

Մեզ հաղորդում են, որ կառավարչական մի քանի հիմնարկութիւններում կարգադրութիւն է ստացված բարձր իշխանութիւնից՝ տեղ բացվելու համեմատ շտատների թիւը պակասեցնելու:

—

Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութիւնը բացատրել է, որ Թիֆլիսի վաճառականութեան կողմից անհրաժեշտ է ընտրել Պետական Դումայի համար մէկ ընտրող, և ոչ երկու: Ուստի Պետերբուրգ ուղևորվեց ընտրութիւններին մասնակցելու Ի. Ֆ. Տիգրանեանը, որ ընտրութեան ժամանակ ստացել էր ամենից շատ ձայն:

—

Ներկայ տարվայ փետրվար ամսում Ապշերոնեան թերակղզու նաւթի արտադրութեան քանակը հասել է 30,078,688 պուդի: Գլխաւոր նաւթարդիւնագործների մէջ առաջին տեղը բռնում են եղբ. Նոբելը. սրանց նաւթի արտադրութեան քանակը այդ ամսում հասել է 3,878,690 պուդի:

—

Մոսկվայի մանուֆակտուրի գործարանատէրերը խորհուրդ են կայացրել իրար մէջ չթի գինը բարձրացնելու. խորհուրդը որոշել է բամբակէ ապրանքների վրա ամեն մէկ արշինին աւելացնել կէս կոպէկ:

—

Մոսկվայի ընտրող-հրէաները որոշել են իրանց ձայները տալ բացառապէս սահմանադրական-ռամկավարական կուսակցութեան թեկնածուներին, որպէս միակ կուսակցութեանը, որը ընդունակ է պաշտպանել Ռուսաստանի մէջ ապրող բոլոր ազգութիւնների իրաւունքները: «Рѣчь»:

—

Թղթի վրա հարկ դնելու նախագիծը ֆինանսների մինիստրութիւնը աշխատում է գլուխ բերել մինչև Պետական Դումայի բացումը: Նախագծով ամեն մէկ պատրաստի թղթի պուդի համար հարկ պիտի դրվի 1 րուբլուց մինչև 1 ր. 50 կ.: Արդէն ֆինանսների մինիստրութիւնը առաջարկել է հարկաբաշխութեան կառավարիչներին՝ ամենակարճ ժամանակում ներկայացնել իրան՝ իրանց կարծիքները, թէ ինչ չափով պէտք է հարկը սահմանել, երբ սկսել նրա բաժանումը, այլ և հաղորդել իրան՝ հարկահաւաքի հետ կապ ունեցող պարագաների և պայմանների մասին:

—

Մոսկվայում, որպէս հաղորդում է «Моск. Вѣд.» լրագիրը, կազմակերպվեց մի մասնաւոր համալսարան, սակայն բացառապէս հարուստ ուսանողների համար: Խոշոր հարուստ վաճառականներից մէկը, որը մի ուսանող որդի ունի, իր տան մէջ սարքեց դասախօսութիւնների կանոնաւոր, սիստեմատիկական ընթերցանութիւն, որ յանձն են առել համալսարանի պրոֆէսորները: Այդ դասախօսութիւնները ներկայումս լսում են 30 ուսանողներ, որոնք պատրաստվում են պետական քննութիւնների համար: Դասախօսութիւններ լսում են միայն հարուստ ուսանողները, որովհետև իւրաքանչիւր դասախօսութեան համար իւրաքանչիւր ուսանողից 20 ր. ամսավճար է պահանջվում: «Рѣчь»:

—

Ներքին գործերի մինիստրը, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի թերթերը, մի նոր որոշում է կայացրել, որով առաջարկվում է զինուորական դրութիւն, սաստկացրած կամ արտակարգ հսկողութիւն յայտարարված տեղերից արտաքսել որոշ զբաղմունք չունեցող անձանց:

—

Պօստ-հեռագրական գլխաւոր վարչութեան կառավարիչ Սևաստիանովը ուղևորվել է Հռօմ, ներկայ լինելու պօստ-հեռագրական համաժողովին: Իտալական պօստ-հեռագրական պաշտօնեաները, որ իր ժամանակին իրանց համակրանքն էին յայտնել ռուսաց պօստ-հեռագրական պաշտօնեաներին գործադուլի պատճառով, ինչպէս հաղորդում է «Рус. В.»-ին, մտադիր են թշնամական ցոյց անել Սևաստիանովի դէմ, գործադուլ արած պօստ-հեռագրական ծառայողների վերաբերմամբ ռեպրեսսիաներ գործադրելու համար, որի մասին հաղորդել են ռուսական պօստ-հեռագրական միութեան Պետերբուրգի բաժանմունքի բիւրօյին:

Յամառ լուրեր են տարածվել որ, իբրև թէ գործադուլային գլխաւոր կոմիտեի և զանազան քաղաքական միութիւնների մէջ բանակցութիւններ են տեղի ունենում ապրիլի 18-ին ընդհանուր քաղաքական գործադուլ անելու, և որ իբրև թէ երկաթուղային ծառայողների միութիւնը արդէն միացել է այդ առաջարկութեանը։ Այդ լուրը սխալ է։ «Путь» թերթը, երկաթուղային ծառայողների միութեան կենտրոնական կոմիտեի խնդիրքով, յայտնում է, այդ որ լուրերը միանգամայն սխալ են։ Յիշեալ կոմիտեը առաջ էլ յայտնել էր և այժմս էլ կրկնում է, որ գործադուլի հարցը կը քննվի երկաթուղային ծառայողների համագումարում, որ կը կայանայ ապրիլ ամսից ոչ առաջ. իսկ մինչև այդ գործադուլ ոչ ոք չէ կարող անել։

—

Պետերբուրգից «Ռ. Գ.»-ը հաղորդում է. ընտրված են սահմանադիր-ռամկավար կուսակցութեան առաջարկած 160 ընտրողները։ Բոլոր մասերում նրանց թեկնածուները ստացան կրկնակի ձայն, որքան ստացել էին միւս կուսակցութիւնները։ Այսպէս, օրինակ, Ադմիրալտէյսկի մասում սահմանադիր-ռամկավար կուսակցութեան ստացած ամենապակաս թիւը հասնում է 1,395-ի, մինչդեռ միապետական կուսակցութեան բլոկի թեկնածուի ստացած ձայների ամենաշատ թիւը 866 էր, Ալեքսանդրո-Նեվսկի մասում սահմանադիր-ռամկավար կուսակցութիւնը ստացել է 2901 ձայն, միապետականները՝ 1218, Կազանսկի մասում, սահմանադիր - ռամկավարները՝ 2135 ձայն, իսկ բլոկը (աջակողմեանները) 885։ Նարվսկի մասում, սահմանադիր-ռամկավարները՝ 3486, բլոկը՝ 1443։ Վիբորգի մասում, սահմանադիր-ռամկավարները՝ 1853 ձայն, բլոկը՝ 652։ Պետերբուրգի մասում. սահմանադիր-ռամկավարները՝ 4788 ձայն։ բլոկը՝ 1720։ Վասիլեվսկում, սահմանադիր - ռամկավարները՝ 8633 ձայն, բլոկը՝ 2122։ Լիտէյնի մասում, սահմանադիր-ռամկավարները՝ 3114, ձայն, բլոկը՝ 2096. Ռօժդենսկի մասում, սահմանադիր - ռամկավարները՝ 2241, բլոկը՝ 2066։ Կլոմենսկում, սահմանադիր - ռամկավարները, 2141 ձայն, բլոկը՝ 969։ Ռուսաց ժողովրդի, ռուս մարդկանց միութեան և ազգային կենտրոնի կուսակցութեան թեկնածուները շատ քիչ ձայներ ստացան։ Սպասսկի և Մոսկովսկի մասերում ձայները դեռ ևս չեն հաշուել։

—

Ֆինանսների մինիստրի և Պետերբուրգի զինուորական շրջանի զօրքերի հրամանատարի միջև կայացած համաձայնութեան համեմատ, ռուս-ֆինլանդական սահմանից անցնելը արգելված է, բացի այդ նպատակով յատուկ նշանակված կէտերից։ «Рѣчь»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Մարտի 21-ին ցերեկվայ ժամի 12-ից անց 25 րոպէ, տեղաց կարկուտ սկսեց մեծ 5 րոպէ շարունակ, ապա կարկտախառն անձրև և տևեց մինչև կէս ժամ։ Գետինը ծածկվեց կարկտի սպիտակ շերտով. փառք Աստծու կարկտի շնորհիւ քաղաքում ապրողները խեղդող փոշուց կազատվեն գոնէ մի քանի օր»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են «Մի քանի օր է ինչ որ քրդերի վոհմակները իրանց մեծերի առաջնորդութեամբ եկել են տեղս և վխտում են Թուրքերի մէջ. այդ բանը կասկածներ է առաջացնում»։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարտի 23-ին Սապեօրնայա փողոցի վրա գտնվող գինետան տէր Խրիստափոր Փիրումովը 3-րդ քաղաքամասի ոստիկանատուն բերեց ասորի Բաշիր Իբրահիմ-օղլուին և յայտնեց, որ վերջինը մարտի 21-ին երեկոյեան, վերցնելով նրա խանութից 3 շիշ գինի, տուեց նրան 10 րուբլիանոց ոսկէ դրամ, որից Փիրումովը վերադարձրեց 9 ր. 40 կ. խուրդա։ Այդ 10 րուբլիանոցը, ինչպէս յետոյ պարզվեց, կեղծ է եղել. գինետան տէրը Փիրումեանը գտաւ Բաշիր Իբրահիմ-օղլուին և կեղծ դրամի հետ միասին ներկայացրեց ոստիկանութեանը, որը դրամը քննելուց յետոյ գտաւ որ կեղծ է, շինած է մի ինչ որ արծաթէ գոյնի կեղծ մետաղից, և ոսկեզօծված է։ Բաշիր Իբրահիմ-օղլին չէ հերքում, որ իր տուած 10 րուբլիանոցը կեղծ էր, բայց ով է նրան տուել այդ փողը չէ յիշում։ Ոստիկանութիւնը նրա տունը խուզարկելու ժամանակ ոչինչ չը գտաւ կասկածելի։

—

Մարտի 23-ին բժիշկ Եվգենի Ֆեօդորովը, որը բնակվում է Նիկոլաևսկայա փողոցի վրա, տ. № 120, յայտնեց, որ 15 օր առաջ նրա կորրիդորից գողացված էր 2 ժակէտ և մի փալտօ, իսկ մարտի լոյս 23 գիշերը սենեակում եղած արկղից գողացված են զանազան ոսկէ և ադամանդէ իրեր, 900 րուբլի արժողութիւն ունեցող։ Վնասվածը կասկած յայտնեց իր աղախին Աննա Գլեբովի վրա, որի սենեակում գտան 2 ժակէտ, փալաս ամաններ և երեխայի խաղալիքներ, բժշկին պատկանող։ Գլեբովան ձերբակալված է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՖՐԱՆՍԻԱ

Սարսափելի աղէտը։ Հանքագործ բանուորների գործադուլը հետզհետէ ստանում է լայն ծաւալ։ Տաս հազարից գործադուլին մասնակցողների թիւը հասել է արդէն 50 հազարի։ Այն փոքրաթիւ հանքագործները, որոնք անհամարձակութեամբ կամ դաւաճանութեամբ շարունակում էին իջնել հորերը աշխատելու, իրանց ընկերների յորդորների և բռնութեան ազդեցութեան տակ, միանում են գործադուլին, և շուտով, ինչպէս հաղորդում են ֆրանսիական թերթերը, գործադուլը կընդունէ ընդհանուր նկարագիր։ Պա դը Կալէի ամբողջ շրջանի— այն գաւառը, ուր գտնվում են ֆրանսիական ածխահանքերը — հանքագործները, համերաշխութեամբ, գործադուլի միջոցով ձգտում են ստանալ գլխաւորապէս օրավարձի յաւելում։ Հանքատէր ընկերութիւնները, աղէտքի Ֆրանսիայում պատճառած ընդհանուր զայրոյթի ճնշման տակ, ստիպվեցին զիջել, բայց այդ զիջողութիւնը այնքան չնչին է, որ բանուորները յանձնառու չեն լինում կանգնել գործի գլուխ։ Բանուորները, որ ստանում էին օրական մօտաւորապէս 6 ֆր. 24 սան. պահանջում են այժմ մինիմում 7 ֆր. 18 սան։ Բանուորների մի այլ սինդիկատ պահանջում է օրական 8 ֆր. և ութժամեայ աշխատանք։ Իսկ հանքատէր Ընկերութիւնները խոստանում են 6 ֆր. 24 սանտիմը բարձրացնել 6 ֆր. 52 սանտիմ, ինչ որ, ի հարկէ չը պիտի բաւականացնէր շահագործվող պարիաններին։

Թէ որ աստիճան արդար է բանուորական պահանջը, հեշտ է ըմբռնել այն խօսքերից, որ արտասանել է մի պաշտօնեայ, նոյն շրջանի, պետական ինժեներների գլխաւորը, որ աղէտքից յետոյ փորձած լինելով իջնել հանքերում, մազ մնաց հանքային գազերից թունաւորվէր։

—Հանքագործների դրած պահանջները կատարելապէս արդար են, եթէ նկատի առնենք այն պայմանները, որոնց մէջ շահագործվում են ֆրանսիական հանքերը։

Եւ իսկապէս, գերմանացի հանքագործների հաստատելով՝ ֆրանսիական հանքերի շահագործութիւնը ամբողջ վաթսուն տարի յետ է մնացել գերմանական նոյն կարգի ձեռնարկներից, գիտական տեսակէտով։

Հանքատէրերի դիմադրութիւնը, ինչ ասել կուզէ, զայրացնում և հետզհետէ ներվային է դարձնում բանուորներին, որոնք, հսկայական թափօրներ կազմած՝ կարմիր դրօշակներով, շեփորներով, թմբուկներով և «Ինտերնացիօնալ» բանուորական յայտնի երգով ման են գալիս փողոցներում և գիշերով, ինչ որ աւելի սարսուռ, տպաւորիչ և ողբերգական է դարձնում նրանց ցոյցերը։

Դժբախտաբար բանուորների մէջ կատարեալ համերաշխութիւն չէ տիրում։ Կան երկու սինդիկատներ. մէկը պարլամենտի պատգամաւոր Բազլիի, իսկ միւսը Բրուշուի ղեկավարութեամբ։ Առաջինները համեմատաբար աւելի զիջող են։ Ծանր աշխատանքից ուժասպառ եղած պարիաների այդ երկու խումբը, մի քիչ աւելի բաղդաւորութիւն ձեռք բերելու համար, դառնացած, անհամբեր, ունենում է երբեմն սուր անհամաձայնութիւններ, որոնք փոխվում են կռիւների։ Այդ պատճառով էլ, Կլեմանսօն, որ խոստացել էր զօրք չուղարկել գործադուլի վայրը, հարկ է համարել, նկատի ունենալով բանուորների ներվայնութիւնը, դրագոնների մի գունդ ուղարկել։ Բռնվել է նոյն իսկ Բրուշուն և դատապարտվել բանտարկութեան։ Ահա ինչու համար նոր հասնող տեղեկութիւնները ցոյց են տալիս գործադուլային շարժումի նուազումը։ Պառակտված՝ բանուորները շտապում են վերջ դնել գործադուլին, մի նոր աղէտի, զօրքի և իրանց միջև մի հաւանական ընդհարումի առաջն առնելու համար։ Այնպէս որ գործաթողների թիւը իջել է 25,000-ի և, հաւանական է, որ գոհ լինելով ձեռք բերված զիջումներից, երևի բոլորը կիջնեն շուտով իրանց տանջարանները—մութ, խոնաւ ու վտանգաւոր հանքերի խորքը, կապիտալիստների համար նոր գանձեր հանելու։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

23 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մարտի։ Պետերբուրգում ընտրութիւնների ժամանակ եղել է ընդամենը 976,805 ձայնատուութիւն, որից թեկնածու կադէտներին ընկնում է 580949 ձայն կամ $59^{1}/_{4}\%$. Մնացած կուսակցութիւնները ստացել են 395,856 ձայն, կամ կադէտների ստացած ձայների թիւ $22^{8}/_{10}\%$-ը։

ԲԵՐԼԻՆ, 22 մարտի։ Րէյխստագը ընդունեց այն եզրակացութիւնը, որ արված էր շաքարի հարկը երկեակ ցէնտներով կրճատելու մինչև 10 մարկի։ Ամերիկական շուկայում գերմանական շաքարը հաւասարվել է շաքարեղէգնին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մարտի։ Պետական խորհրդի անդամ Պետերբուրգի նահանգական զեմստվօյի կողմից ընտրված է Պաւլ Լէօպոլտովիչ Կորֆը։ Դատաստանական պալատը դասակարգային ներկայացուցիչների հետ միասին լսեց «Нужды Деревни» լրագրի խմբագիր-հրատարակիչ Մերտվոյի գործը և արդարացրեց նրան։ Նահանգական դատարանը քննեց «Народное Хозяйство»-ի խմբագիր Գօլուբէվի գործը, որին դատապարտեց 2 ամսեայ բանտարկութեան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մարտի։ Պետական խորհուրդը ընդունեց այն օրէնքը, որի համաձայն Սախալին կղզին աքսորականներ այլ ևս չեն ուղարկվի։ Տաժանակիր աշխատանքների դատապարտածները իրանց պատիժը կրելու են Սիբիրում, իսկ թափառաշրջիկներն ուղարկվելու են Եակուտսկի շրջանի հիւսիսային գաւառները։ Վերջին շաբաթում արած խուզարկութիւնները Սարատովում, Բրիանսկում, Բագուում, Սլօնիմում, Ումանում, Սորմովում, Եկատերինօսլաւում, Լուգանսկում, Օդեսայում, Բէլօստօկում, Խարկովում, Րիգայում և Սմօլենսկում երևան են հանել մեծ քանակութեամբ ատրճանակներ, փամփուշտներ, ռումբեր, յեղափոխական հրատարակութիւններ և դինամիտ։

ՊՈԼՏԱՒԱ, 22 մարտի։ Պօլտաւա կայարանից Խարկով մեկնող ապրանքային գնացքը ենթարկվել է մի զինված աւազակախմբի յարձակման։ Վիրաւորվել է մի կօնդուկտոր։ Օգնութեան հասնող ժանդարմները տաք հրացանաձգութեան են բռնվել. ոչ ոք չէ բռնված։ Պօլտաւա-Սօրտիրովօչնայա կայարանն են ուղարկվել 17 վագօն գնդակաձիգներով։ Գիշերը նկատել են, որ մի վագօնում կնիքները կտրելով գողացված է մի գնդակաձիգ, որ շուտով գտել են գծից ոչ հեռու։ Գնացքը պաշտպանում են պահակները։

ՌՕՍՏՕՎ, 22 մարտի (Եարօսլաւսկի)։ Մարտի 22-ի գիշերը կողոպտված է Րօստովի մօտ գտնվող Տրօիցկօ-Վարնիցկի մենաստանը։ Գողացված են արժէքաւոր թղթերը։ Չարագործները ազատ են։

ՐԻԳԱ, 22 մարտի։ Հասարակ ոստիկանի վրա յարձակվելու համար ոմն Խրիստոֆ Կրաուզէն ժամանակաւոր զինուորական դատարանի վճռով մահվան է դատապարտված։

ԲՈՒԴԱՊԷՇՏ, 22 մարտի։ Ֆէյէրվարին 2 ժամով խօսակցութիւն ունեցաւ Ֆրանս Կօշուտի հետ։ Այդ դէպքը սենսացիա է առաջացրել։ Կարծում են որ կառավարութիւնը այդպիսով այնպիսի քայլ է անում, որով կարելի է տագնապին վերջ դնել։ Տեսակցութիւնից յետոյ Ֆէյէրվարին մեկնեց Վիեննա՝ զեկուցանելու Կօշուտի հետ ունեցած բանակցութիւնների մասին։ (Կոր. բիւրօ)։

ԴՈՒՐԲԱՆ, 22 մարտի։ Խռովութեան պարագլուխ Բոմբատի կողմնակիցները կտրելով հեռագրաթելերը—Գրէյտաունի մօտ կրակ բացին ոստիկանական պահակախմբի վրա, կողոպտեցին երկու դաստակերտ, ուր ձեռք գցեցին շատ զէնքեր և ռազմամթերքներ (Րէյտեր)։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մարտի։ Կիէվի, Գլազովի, Մարիուպոլի, Նովօմոսկովսկի, Զլատոպոլի, Օրլովի, Լիւսկովի, Քիշինևի, Բալախանի և Ուֆայի քաղաքային ընտրութիւնների մասին եկած հեռագրները վկայում են, որ աջողութիւնը այդ տեղերում կադէտների կողմն է եղել։ Ալեքսանդրօվսկում, Կօզմօդէմեանսկում յաղթող են հանդիսացել պահպանողականները։ Մօգիլեվում և Պօդօլսկում ընտրութիւնները յետաձգված են։ Խոշոր հողատէրերի համաժողովին ազատամիտները տարել են յաղթութիւնը։

ԼԱՆ, 22 մարտի։ Այսօր գլխաւոր քննիչը սկսեց քննութիւն բանալ Կուրիէրում ազատութեան աշխատանքներին հսկող երկրաչափների դէմ։ Այն լուրը, որ իբր գտնվել են կրկին 9 կենդանի բանուորներ, չէ ճշտվում, սակայն շարունակում են փնտռել։ Հրշէհաշէջները և մի քանի բժիշկներ թթւածնի պարկերով մտնում են հորերի մէջ։

ԼՕՆԴՕՆ, 22 մարտի։ Րէյտերի գործակալութիւնը Տօկիօից հաղորդում է, որ Եապոնիան—նախ քան կը բանայ ամբողջ Մանջուրիան օտարերկրացիների առևտրի համար—մտադիր է թոյլատրել օտարազգի նաւերին՝ մտնելու Տատունգկաո նաւահանգիստը։

ԴՈՒՐԲԱՆ, 22 մարտի։ Խռովութեան պարագլուխ Բոմբարդի սանձարձակութիւնների առաջն առնելու համար Գրէյտաունն է ուղարկվում թնդանօթաձիգ մի բատարէա և մի վաշտ հետևակ զօրք։

ՊԷԿԻՆ, 22 մարտի (Րէյտեր)։ Նանչանգի չինացի պաշտօնեայի մահը, որ հետևանք էր հոգևորական միսիայի վրա կատարված յարձակման,—շարունակում է հիւսիսային Չինաստանի ազգաբնակութեան մէջ խռովութիւններ առաջացնել միսիօնարների դէմ։ Շատ տեղերում միսիաների մօտ զինուորական վաշտեր են դրված։

ԿՕԿԱՆԴ, 23 մարտի։ Դատարանը քննեց տեղացի 32 բանտարկեալների գործը, որոնք աշխատել են զինաթափ անել զինուորական պահակախմբին և կամեցել են փախչել։ Մէկը արդարացրված է, իսկ 31-ը դատապարտված են բանտարկութեան բանուորների բաժնում։

ԽԱՐԲԻՆ, 22 մարտի։ Եկւոր մօնղոլները յայտնում են, որ Դալայ-Լաման մտադիր է Ուրգից մեկնել և մշտական բնակութիւն հաստատել Լխասում։

ԲԵՐԼԻՆ, 22 մարտի։ Մշալօվիտս մագիստրատը կառավարչական նախագահին խնդիր է ներկայացրել, որի մէջ մատնացոյց է անում սահմանակից շրջանների բանուոր ազգաբնակութեան անբաւականութեան վրա, որ առաջացել է ուտեստեղէնի մաքսը աւելացնելուց։ Երկիւղ են կրում, թէ մի գուցէ դժգոհութիւնը անկարգութիւնների և գործադուլի առիթ դառնայ։ Մագիստրատը խնդրում է վերական գնել մաքսային նախկին չափը։ Ասում են որ նախագահը ներքին գործերի մինիստրի մօտ մագիստրատի միջնորդութիւնը եռանդուն կերպով պաշտպանել է։

ԼԷՅԲԱԽ, 22 մարտի։ Լանդտագի նիստի վերսկսելով, օբստրուկցիօնիստների առաջացրած աղմուկը շարունակվել է։ Նիստը 2 ժամով ընդհատվում է։ Ընդմիջումների ժամանակ տեղի են ունենում կուսակցութիւնների բանակցութիւնները, փոխադարձ զիջումների հասնելու նպատակով։ Սլաւօնական կուսակցութիւնը պատրաստակամութիւն է յայտնում զիջումներ անել. ազգային ազատամիտ կուսակցութիւնը համաձայնում է փոխադարձ զիջումների բանակցութիւններ սկսել միայն այն պայմանով, եթէ Լանդտագի նստաշրջանը անմիջապէս յետաձգվի։ Նիստը վերսկսելու ժամանակ շրջանի պետը յայտնում է, որ ներկայ պայմաններում անօգուտ է նիստը շարունակել, որի համար և նա ժողովը փակում է։

24 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 մարտի։ Քիշինևում ընտրված են 53 քրիստոնեայ, 25 հրէա, 2 կարաիմներ, որոնցից 33-ը պահպանողականներին, իսկ 47-ը ազատամիտներ։ Վորոնէժի գաւառում գիւղացիները եռանդուն ագիտացիա են են մղել ազնուականների, վաճառականների և հոգևորականութեան դէմ. Րօստովի վիճակում ազատամիտները սևացել են։ Վատացի նախագահութեամբ կազմած խորհրդակցութիւնը անբերրիութիւնից վնասված գիւղացիներին յատկացրեց կրկին 1,128,075 ր.։

ԼՕԶԱՆ, 23 մարտի։ Վճաբէկ դատարանը անուշադիր թողեց Ժընէվի գործի համար մեղադրվող ռուսաց հպատակների բողոքագիրը։

ԲՈՒԴԱՊԷՇՏ, 23 մարտի։ Լրագիրների ասելով, Ֆէյէրվարին Կօշուտի հետ տեսակցելու ժամանակ առաջարկել է գումարել պատգամաւորների պալատը և մտցնել ընտրողական բարենորոգում, որից յետոյ կը նշանակէ նոր ընտրութիւններ։ Կօշուտի կուսակցութիւնը համաձայն է, բայց Անդրաշի կուսակցութիւնը և կղերականները հակառակ են այդ բանին։

ՏՈՒԼՕՆ, 23 մարտի։ Բանուորների հետ բանակցութիւններ վարելու համար ոստիկանական վերակացուն և մի զինուոր բռնված են որպէս գերիներ։ Գործադուլ անողները յայտնել են, թէ նրանց բաց կը թողնեն այն դէպքում, երբ կը թոյլատրվի փողոցներով թափօրներ կատարել։

ՉԻՏԱ, 23 մարտի։ Երկաթուղային գումարտակի 46 զինուորներից դատարանը արդարացրեց 28 հոգուն, 1-ին դատապարտեց անդարձ աքսորի, իսկ մնացածներին զանազան պատիժներ որոշեց։ Զինուորական դաշնակցութիւն կապելու համար ձերբակալված են կապիտան Ալեքսանդրովը, շտաբս - կապիտան Ներմէժինսկին և փոխ եսաուլ Նեկօլցէվը. գեներալ Խօլշեվնիկովի բանտարկութիւնը փոխարինված է տնային բանտարգելութեամբ։

ՕԴԵՍԱ, 23 մարտի։ Կազմվեց հոկտ. 17-ի և առևտրա - արդիւնաբերական կուսակցութեան միացեալ կոմիտէ։ Նախընտրական ագիտացիան ուժեղանում է։

ԴՈՒՐԲԱՆ, 23 մարտի։ Իմպանցում կենտրոնացած բրիտանական զօրքը հարկադրված էր թողնել բանակատեղին և տաք կռւից յետոյ դէպի Գրէյտաուն նահանջել։ Զօրախմբի մի մասը գնացել է Կէտսարէֆը՝ ազատելու այնտեղ փակված կանանց և երեխաներին։ Զօրախումբը հասել է իր նպատակին, բայց վերադարձին յարձակման է ենթարկվել, դիմել է փախուստի և յետ է նահանջել մօտ 6 մղոն, որի ժամանակ սպանվել են երեք ոստիկանական պաշտօնեաներ, իսկ մի քանի մարդ վիրաւորված են, մնացածները հասել են Գրէյտաուն։ (Րէյտեր)։

ԲՈՒԴԱՊԷՇՏ, 23 մարտի։ Կոալիցիայի ղեկավարները այսօր առաւօտեան հաւաքվեցին ժողովի։ Խորհրդակցութիւնը շարունակվեց և կէսօրից յետոյ։ Մինչև այժմ ոչ մի վճիռ չէ կայացրած։ Ասում են, որ կառավարութեան հետ հաշտութեան գործը առաջ է գնում։

ՓԱՐԻԶ, 23 մարտի։ Վեստֆալեան քարածուխային բանուորին ուղղած Վիլհէլմ կայսրի ճառը մեկնաբանելով «Радикалъ»-ն ասում է. «Ծիրանագոյն լուսափայլված Կուրիէրի երկնակամարից ի տես բոլորին դէպի մեզ է թռչում հաշտութեան ձայնը ձիթենու ճիւղով»։

ՄԱՐՍԷԼ, 23 մարտի։ Որովհետև մրրիկը շարունակվում է, ուստի մեծ բրիտանական կայսերական յանձնախմբի ճանապարհորդութիւնը միջերկրական ծովում, — յետաձգված է վաղվան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 մարտի։ «Օրէնքների ժողովածուում» հրատարակված է բարձրագոյն հաստատված Պետական Խորհրդի կազմած որոշումները՝ նիւթականապէս աջակցութիւն ցոյց տալու՝ զանազան տեղերում տեղի ունեցած անկարգութիւններից վնասված ձեռնարկութիւններին և մասնաւոր անձանց, և քրէական կարևորագոյն գործերի քննութեան ժամանակամիջոցը կրճատելու միջոցների մասին։—Թոյլատրված է հրէաներին բժշկվելու համար ապրել Կովկասի հանքային ջրերում։—Հէնրիխ Բլօկի ինքնասպանութիւնը վերագրում են ունեցած նեարդերի խանգարման։

ԲԵՐԼԻՆ, 23 մարտի։ Րէյխստագում կոմս Բիւլովը—Ալժեզիրասի կօնֆերէնցիայի ելքի առիթով մի երկար ճառ արտասանեց։ Ապա, երբ խօսում էր Բեբելը,—ըստ երևոյթին Բիւլովը վատ զգաց իրան։ Նա մի քանի անգամ նստած տեղից թեքվեց դէպի ձախ, բայց ընդունեց իր նախկին դիրքը։ Բախէմ պատգամաւորը, որ հետևում էր գլխաւոր մինիստրին, մօտեցաւ դաշնակցական խորհրդի անդամների սեղանին և բռնեց մինիստրին։ Փոխ—նախագահ Շտօլբէրգը աղաղակեց. «Բժիշկ Մուգդանը այստեղ է» և Մուգդանը Բէկէրօմ բժշկի հետ շտապեց օգնել մինիստրին։ Բեբելը ընդհատեց իր ճառը։ Նիստը քառորդ ժամով փակվեց. դահլիճում տիրեց խորին լռութիւն։ Մինիստրը մի փոքր բարձրանալով սկսեց խօսել բժիշկների հետ։ Ապա նրան դահլիճից դուրս տարան։ Ժամի 1 և 20 րոպէին նիստը վերսկսվեց։ Ժամի 2 և 45 րոպէին րէյխստագ եկաւ Վիլհէլմ կայսրը, եկաւ նաև իշխանուհի Բիւլովը, որի հետ կայսրը սկսեց խօսակցել։ Մինիստրը պարզ պատասխանում էր բժիշկների հարցերին։ Րէնվօրնսի կարծիքով, մինիստրը ունեցել է սաստիկ ուշաթափութիւն։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը հաշուած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Փոստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցիշ.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 16 ր. գիշ.
Ալեքսանդրոպոլից դուրս գալը	7 » 38 » եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալեքսանդրոպոլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր. գիշ.
Երևան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
ՌՈՒՍԵՐԷՆԻՑ ՀԱՅԵՐԷՆ

Լոյս տեսաւ ՈՒԹԵՐՈՐԴ պրակը։ Բառարանի բաժանորդագինն է 7 ր., ճանապարհածախսով 8 րուբլի։ Իններորդ (վերջին) պրակի տպագրութիւնը, որ հեղինակից անկախ պատճառներով ընդհատուած էր, վերսկսվել է և շուտով կաւարտուի։

Բաժանորդագրութեան վերջին օրերն են։

Լիակատար բառարան հայերէնից ռուսերէն։ Բաժանորդագինն 4 ր.։ Հեղինակին դիմել. Тифлисъ, А. Дагбашяну. Թիֆլիսում գրվել «Գուտտէնբերգ» գրախանութում։ 1—1

Լոյս տեսաւ
ԱՂԲԻՒՐ № 2
Բովանդակութիւն

Ծոլակն ու Արուսեակը. Զարուհի. Պատժված Արուսեակն ու իր տիկնիկ Սարնգիւլը. (պատկեր). Ժանտախտ (ոտանաւոր). Կոստ. Մ.-Շահնազարեան. Հեզ Լօտոս. (պատկեր). Գլուխը քարշ (Հէյնէից). Կ. Կ. Մ.-Շահնազարեան. Երեք խորհուրդ. Լևոն Վարդանի. Ներսէսեան ազգային դպրանոց. (պատկեր). Աչքը տալուց քարերը կը ճաքեն (Հէքեաթ). Մ. Մաղաքեան. Ս. գիրքը ԺԳ դարում, Ազգ. Մատենադարան. (Գեղանկար). Իմ նպատակը (պատկերներով). Ֆերրօ. Ազատ գետը (բանաստեղծ). Լէօնիդ. Ս. Շողակաթի վանքը (պատկերով). Բենիկ վարդապետ. Փոքրիկ երաժշտագէտը. (պատկեր). Պադուացի հայրենասէրը (Դէ-Ամիչիս-ից) Քամալեանց Ս. Իմ որսի գնալը (Սօլօվեայից). Օր. Մ. Ս. Արձան Ժիւլ-Վերնէին (պատկերով)։

ԱՅՍՏԵՂ, ԱՅՆՏԵՂ, ԱՄԵՆՏԵՂ

Արձան Հէյնէին։ Թոյլերին պաշտպան. ընկերութիւն։ Զրոյցներ ժողովրդ. գրագար. Բեթովէն և Լիստ. Զ. Տ. Գ. Լիստ. (պատկեր)։

ԶԻԱՐՃԱԼԻՔ

Հանելուկ։ Բացատրութիւններ։ Յայտարարութիւններ։ 1—1

Ձեռնարկելով Բօստոնում գեղարուեստական մի հաւաքածուի հրատարակութեան «Կովկաս» վերնագրով, բազմաթիւ շքեղ, գունաւոր պատկերներով՝ խնդրում ենք ձեզ չը զլանալ ձեր աջակցութիւն որ և է ձեզ մատչելի միջոցներով։

Մեր հաւաքածուի ընդհանուր ծրագիրն ընդգրկելու է.

1. Բանաստեղծութիւններ։
2. Վէպիկներ, պատկերներ, նորավէպեր։
3. Հայկական հարցը Կովկասում և Տաճկահայաստանում.
4. Կովկասեան կոտորածներ.

Գեղարուեստական մասի մէջ մտնելու են պատկերներ և տեսարաններ, հայկական և գլխաւորապէս կովկասեան կեանքից են, են։

Այս հաւաքածուն լոյս է տեսնելու մայիսին և ուստի խնդրում ենք ձեզ, բարեհաճէք հաստատել ձեր օժանդակութիւնը մեր ձեռնարկութեան առ աւելի 20 օրվան մէջ ներկայ դիմումը ընդունելուց յետոյ։

Հարկաւոր ենք համարում յայտնել, որ հաւաքածուի ողջ արդիւնքը յատկացվելու է կովկասեան աղէտներից վնասված հայ ազգաբնակութեան, պ. Մելիք-Ազարեանցի միջոցով։ Աշխատակցելու են մի քանի ականաւոր հայասէր ամերիկացիներ։

Մեր հասցէն՝ Alexander Melik, «Ararat» Publ. Co. P. O. Box 4, Chelsea, Mass. Etats Unis. Ի դիմաց Յանձնախմբի՝

3—1 Ալեքս. Մելիք

ԷԼԵԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ
ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեդեվանովի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը,
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կօրգանօվսկայա փող. № 20 Վերայում, Սեփական տ., տելէֆօն № 791։ (ա. օ.) 97—150

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8։ (ե.ռ.)48—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կադետսկայեա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կադետսկի փողոցից № 2։
(ա. օ.) 116—300

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. ՉԱԽԱՐԲԷԳԵԱՆ
Ներքին եւ ներվային հիւանդութիւնների

Ընդունում է առաւօտեան ժամի 10—12-ը և երեկոյեան ժամը 6—7։ Լերմօնտօվսկայա փողոց, տուն № 16։
(ա. օ.) 2—50

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Կուկիա, Սեմեօնօվսկի փողոց № 20։
(ու. կ. ե.) 3—20

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտօվսկի և Պասկեվիչա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (Նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 59—100

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին օրդինատօր Մօսկվայի համալսարանի կլինիկայի

Վերսկսեց ընդունելութիւնը՝ յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւնը ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան։ Բոտչէվսկայա փող. № 1. «պօժարնի կոմանդի» դիմացը. տելէֆօն № 11։
(ա. օ.) 6—20

ՄԵԾ ԱՅԳԻ
4½ ԴԵՍԵԱՏԻՆ

Վերայում, մօլօկանների աւանի մօտ ԾԱԽՎՈՒՄ է։ Հարցնել Սօլօլակ, Գանօվսկի փողոց, № 22, շվէյցարին։
3—3

«ԳՈՒՏՏԷՆԲԵՐԳ» ԳՐԱԽԱՆՈՒԹԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ
Լոյս տեսաւ
ՓՈՒՉ ՋԱՆԱԿ
Դրամա հինգ գործողութեամբ
Գեորգ Ղարաջեանի
Դիմել՝ Թիֆլիս, գրախանութ «Գուտտէնբերգ»։
Գինն է 50 կոպէկ
3—3

Մի պարոն, որը երկար տարիներ ծառայել է պետական հաստատութիւններում որպէս հմուտ քարտուղար և գործավար, խնդրում է ծառայութիւն։ Հասցէն՝ Աւճալեան փողոց № 63, մեքենագէտ Լուսինեանցի բնակարան։
(ու. ե. չ.) 2—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Չորեքշաբթի, մարտի 29-ին, երեկոյեան ժամի 9-ին նշանակված է անդամների երկրորդ ընդհանուր ժողով՝ ընտրելու պակաս թեկնածուներին, անդամութեան առաջարկած անձանց քուէարկելու համար, ինչպէս և քննելու և հաստատելու 1905 թ. հաշիւը, 1906 թ. նախահաշիւը և մի քանի տնտեսական հարցեր։
(24, 29) 2—2

Դաստիարակութեան մէջ
ՓՈՐՁՎԱԾ
մի երիտասարդ ընդունում է թէ իր և թէ ցանկացող հայ ընտանիքներում հայոց լեզուի դասեր տալ, իսկ երեխաներին բացի դասից բարոյակրթական պարապմունքներ, նոյնպէս սովորեցնում է հասակաւոր անգրագէտներին հայերէն. նոյնը որոնում է հայ գրասենեակներում գրագրի պաշտօն։ Դիմել «Մշակի» խմբագրատան։ 3—5

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ՊՕՏԵԽԻՆ
„ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ"
108 պատկերներով, Թարգմ.
Մելիք-Վարդումեան
Գինն է 75 կոպէկ
Դիմել՝ Тифлисъ Книжный магазинъ „Гуттенбергъ"։ 3—3

ՀՐԱՒԷՐ

Թեմիս հոգևոր իշխանութեան կարգադրութեան համաձայն, ամսիս 26-ին, կիրակի օրը՝ ժամը 12-ին, ս. պատարագից յետոյ Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցու յարգելի ծխականները հրաւիրվում են նոյն եկեղեցին մասնակցելու նոր երեցփոխի ընտրութեան։

Գործակալ՝
Յովհաննէս աւագ քահ. Մարտիրոսեան
(ու. չ. 2—2

Յիսուս Մարդ Աստուած
ՅԱՏԿԱԿԱՆ № ՏԱՐԱԶԻ
Նկարներ աշխարհահռչակ ԳՈՒՍՏԱՒ ԴՈՐԷ-ի և այլոց

Յիսուս մտորմունքի մէջ։ Յիսուս յուզւած և արտասուող։ Յիսուս փշերով պսակւած։ Յիսուս՝ ահա Մարդը։ Յիսուս Խաչի վրա հրեշտակի հովանու տակ։ Յիսուս խաչւած։ Յիսուս խաչից իջնելիս։ Յիսուս դագաղի մէջ։ Յիսուս յարուցեալ։ Խաչն կենարար և համայնեցի պահպան զինւորը։ Երուսաղէմ, Սողոմոնի տաճարը, հրապարակը։ Հրէաներ։ Ռաբբիներ և այլն։

Յօդուածներ տօնին և արդի մեր օրերին պատշաճ.

ԱՌԱՆՁԻՆ №-Ը 20 Կ.

Հայ բոլոր թերթերի բաժանորդները ուղարկելով իրանց՝ ստանում թերթի տպագրած հասցէն և 14 կ. մարկա կը ստանան այդ №-ը Զատկին, եթէ նրանց պատուէրը ստացված լինի աւագ չորեքշաբթի օրվանից ոչ ուշ։ Այնուհետև №-ը դարձեալ 20 կ։

Գաւառների համար 50 հատը, 8 ր. 50 կ. 100 հատը 14 ր.։ Վերադիր վճարով և ապառիկ պատուէրները կը մնան անկատար։ Դիմել՝ Тифлисъ, Редакція «Таразъ». 1—1

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՇԵՐԱՄԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆԻ
ՊԱՀԵՍՏՈՒՄ,

Մուշտայիդ այգում, վաճառվում է ՇԵՐԱՄԻ ԸՆՏԻՐ ՍԵՐՄ դեղին և սպիտակ տեսակի, մսխալը 40 կոպ.

Թթենիներ, այգեպահական և շերամապահական գործիքներ
ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ՀԱՒԱՔԱԾՈՒՆԵՐ,
Մեղուապահական գործիքներ,
ԴԱԴԱՆ-ԲԼԱՍՏԻ ԵՒ ԳԷԴՕՆԻ ՓԵԹԱԿՆԵՐ, ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐԸ 4 ՌՈՒԲԼՈՒՑ ՍԿՍԱԾ։ Մեծ քանակութեամբ գնողներին զիջումն է լինում։

Արհեստական մոմաթերթ, (вощина) գործիքներ, ցենտրաֆուգներ, նկարներ, քարտէզներ, ձեռնարկներ և այլն։

(ե.հ.չ.) Գների ցուցակը ուղարկվում է ՁՐԻ։ 9—25

Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը

սրանով պատիւ ունի հրաւիրելու պ.պ. բաժնետէրերին արտակարգ ընդհանուր ժողովի, որը կայանալու է ներկայ 1906 թ. ապրիլի 4-ին, երեքշաբթի օրը, առաւօտեան ժամը 11-ին, ընկերութեան գրասենեակում, որը գտնվում է Սերգէեվսկայա փողոցում, Փրիգօնովի տանը № 7։

Պարապմունքի առարկան կը լինի։

Տէրունական գանձարանից փոխառութիւն ստանալու հարցը, համաձայն նոյեմբերի 11-ին, 1905 թ. Բարձրագոյն հաստատված մինիստրութեան կոմիտէի որոշման։

Եթէ ժողովը սահմանված ձայների քանակութեան բացակայութեան պատճառով չը կայանայ, երկրորդ անգամ նշանակվում է նոյն տեղը, ապրիլի 9-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 11-ին, որը կը համարվի կայացած, ի նկատի չառնելով ձայների քանակութիւնը (§ 29)։
(23,25,30) 2—3

ԴՈՒԽԻ
Sweet Pea"
Բրօկար եւ Ընկ.
(25) 4—6

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15